

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ԱՎԵՏԻՍ ՏԻԳՐԱՆ»

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԳԵՏԱՄԵՋԻ ԱՎԱԶԱԿՈՂՃԱՅԻՆ ԽԱՌՆՈՒՐԴԻ
ՀԱՆՔԱՎԱՅՐՈՒՄ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Տնօրեն՝

Պ. Պողոսյան

Երևան 2024

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Էջ
ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ	3
1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ	6
2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	12
2.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	12
2.2. Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը	15
2.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը	19
2.4. Այլընտրանքային լուծումներ	25
3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	27
3.1. Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն, սողանքային երևույթներ, սեյսմիկ պայմաններ	27
3.2. Կլիմայական բնութագրեր	30
3.3. Մթնոլորտային օդ	33
3.4. Ջրային ռեսուրսներ	34
3.5. Հողեր	39
3.6. Բուսական և կենդանական աշխարհ	40
3.7. Բնության հատուկ պահպանվող տարածքներ	44
4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ	49
5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	57
6. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ	68
7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ	70
8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ	78
9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ	81
10. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՍԻ ԿԱՆԽՈՒՄԸ ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆԻ ԱՂՏՈՏՈՒՄԻՑ	84
Օգտագործված գրականության ցանկ	86

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Օգտակար հանաձոյի պաշարներ՝ օգտակար հանաձոյի կուտակումներ, որոնց ծավալը, քանակը, որակը և տարածքային դիրքն ու ձևը որոշված են

Հանքավայր՝ ընդերքի մաս, որը պարունակում է օգտակար հանաձոյի պաշարներ (այդ թվում՝ կանխատեսումային), որոնք ստացել են երկրաբանատնտեսագիտական գնահատական.

Օգտակար հանաձոյի արդյունահանում՝ օգտակար հանաձոյի դուրսբերումը հանքավայրերից և դրանց մեջ պարփակված օգտակար բաղադրիչների կորզմանն ուղղված աշխատանքների համալիր

Նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում.

Նախագծային փաստաթուղթ՝ նախատեսվող գործունեության տեխնիկական զեկույց, տեխնիկատնտեսական հիմնավորում, տեխնիկատնտեսական հաշվարկ, ճարտարապետաշինարարական նախագիծ.

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության հիմնական փուլ՝ հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ուսումնասիրության և վերլուծության արդյունքում դրանց թույլատրելիության վերաբերյալ պետական փորձաքննական եզրակացություն տալու գործընթաց.

Բնապահպանական կառավարման պլան՝ ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող միջոցառումներ և դրանց իրականացման մշտադիտարկման ցուցիչներ, որոնք հստակ են և չափելի՝ որոշակի ժամանակի ընթացքում

Բույսերի կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացման

եզրին գտնվող բույսերի և համակեցությունների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին Կենդանիների Կարմիր գիրք՝ միջազգային պահանջները բավարարող համահավաք փաստաթուղթ է, որում գրանցվում են տեղեկություններ հազվագյուտ, անհետացող կենդանական տեսակների կարգավիճակի, աշխարհագրական տարածվածության, էկոլոգիական պայմանների, կենսաբանական առանձնահատկությունների, ներկա վիճակի և պահպանման միջոցառումների մասին: Կենդանիների Կարմիր գիրքը վարվում է հազվագյուտ և անհետացող կենդանական տեսակների և համակեցությունների հաշվառման, պահպանության, վերարտադրության, օգտագործման և գիտականորեն հիմնավորված հատուկ միջոցառումների մշակման և իրագործման, ինչպես նաև դրանց մասին բնակչությանը իրազեկելու նպատակով

Հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ

Հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով

Ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական

Ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությային փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք

Խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով մշտադիտարկումներ՝ ընդերքի երկրաբանական ուսումնասիրության և օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային ծրագրերին զուգընթաց՝ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրով, օգտակար հանածոների արդյունահանման աշխատանքային նախագծով, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտով և ազդեցության գնահատման հաշվետվությամբ ամրագրված ցուցանիշների հիման վրա իրականացվող մշտադիտարկումներ:

1. ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՈՐՄԱՏԻՎ-ԻՐԱՎԱԿԱՆ ՀԵՆՔԸ

Արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական հաշվետվությունը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են հետևյալ իրավական ակտերում.

– ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

– ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

– ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

– «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

– «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների

պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք ՀՕ-121 (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2022թ.) - կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները,

«Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

– «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

– «Թափոնների մասին» 24.11.2004թ.-ի № ՀՕ-159-Ն օրենք, որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

– ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի թիվ 22-Ն որոշում, որով սահմանվել են օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման

նպատակով մշտադիտարկումների իրականացման, դրանց իրականացման վճարների չափերի հաշվարկման և վճարման կարգերը:

– ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման, ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

– ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

– ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

– ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը,

– ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը:

- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N676-Ն որոշում, որով հաստատվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և վերամշակման պլանների օրինակելի ձևերը:
- ՀՀ կառավարության 18.08.2021թ.-ի N1352-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված ընդերքօգտագործողների կողմից Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 3-րդ հոդվածով սահմանված ռեկուլտիվացիոն աշխատանքների՝ նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգի հետ կապված իրավահարաբերությունները:
- ՀՀ կառավարության 08.09.2011թ.-ի №1396-Ն որոշում, որով սահմանվում են Հայաստանի Հանրապետության տարածքում հողի բերրի շերտի նպատակային և արդյունավետ օգտագործման հետ կապված հարաբերությունները;
- ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 69-րդ հոդվածով սահմանված՝ շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման հետ կապված հարաբերությունները:
- ՀՀ առողջապահության նախարարի 06.03.2002թ.-ի N138 հրաման, որով հաստատվում են աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում աղմուկի սանիտարական նորմերը:
 - ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի N 18-Ն որոշում, որով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածքում, Արաքս գետի ողողատներում գտնվող հանքավայրերից գետավազի արդյունահանման հետ կապված հարաբերությունները:
 - 25.10.2022թ շրջակա միջավայրի նախարարի 369-Ն հրաման:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

ՀՀ Արարատի մարզի Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրում նախատեսվում է իրականացնել օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներ: Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը գտնվում է ՀՀ Արարատի մարզում, Արտաշատ քաղաքից 5 կմ արևմուտք, վարչական առումով գտնվում է ՀՀ Արարատի մարզի Բուրաստան համայնքում, գյուղից 2.7 կմ դեպի հարավ-արևմուտք, Արաքս գետի ձախափնյա ողողահունային մասում, Հրազդան և Ազատ գետերի գետաբերանների միջև ՀՀ Պետական սահմանի եզրին: Արարատ-Երևան ավտոմայրուղու հետ կապված է գրունտային ճանապարհով:

Տարածքի իրադրային հատակագիծը ներկայացված է նկար 1-3-ում:

Ծովի մակերևույթից բարձրությունը կազմում է 818-820մ:

Հանքավայրի աշխարհագրական կոորդինատներն են.

Հյուսիսային լայնությունը – 39°57'49.62"

Արևելյան երկայնությունը – 44°29'8.65"

Հայցվող տարածքից մոտ 1,7կմ հեռավորության վրա անցնում է Ս2 միջպետական ավտոճանապարհը:

Հայցվող տեղամասի կոորդինատները

1.	8455961.0000	4425836.0000
2.	8456002.0000	4425787.0000
3.	8456156.0000	4425642.0000
4.	8456158.9400	4425639.0600
5.	8456151.0000	4425617.0000
6.	8456156.1600	4425607.6000
7.	8456147.1900	4425577.1500
8.	8456124.0000	4425598.0000
9.	8455972.0000	4425763.0000
10.	8455953.0000	4425790.0000

$$S = 1.27\text{հա}$$

Մոտակա բնակավայրերն են Մասիս և Արտաշատ քաղաքները, Բուրաստան, Ազատավան, Բաղրամյան, Բերքանուշ, Դալար և Սրգավան գյուղերը:


Շրջանի կլիման չոր է և խիստ ցամաքային (ամռանը մինչև +40°C, իսկ ձմռանը - 10°C): Տարեկան միջին ջերմաստիճանը +16°C է: Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը չի գերազանցում 300մմ-ը: Անասոնամանիք օրերի թիվը 150-200 օր:

Տարածաշրջանը հիմնականում գյուղատնտեսական է, զարգացած խաղողագործությամբ, այգեգործությամբ և բանջարաբուծությամբ:

Արդյունաբերությունը ներկայացված է գյուղմթերքների մշակման (գինու, կոնյակի և պահածոների) և շինանյութերի արդյունահանման ձեռնարկություններով: Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրերի հենքի վրա 1933թ.-ից գործում է Արարատի ցեմենտի գործարանը: Ներկայումս շահագործվում են նաև տրավերտինների և ավազների մի քանի հանքավայրեր (Գոռավան, Արտավազ, Լուսառատ, Եղեգնավան և այլն): Գործում են նաև մի շարք քարամշակման արտադրանասեր: Վառելիքաէներգետիկ հումքի և անտառանյութի պահանջները բավարարվում են ներմուծման հաշվին: Շրջանն ապահովված է էլեկտրաէներգիայով, որը մատակարարվում է հանրապետական միացյալ էներգացանցից:



Նկար 1.



Նկար 2





Նկար 3.

Տարածաշրջանը հիմնականում գյուղատնտեսական է, զարգացած խաղողագործությամբ, այգեգործությամբ և բանջարաբուծությամբ:

Արդյունաբերությունը ներկայացված է գյուղմթերքների մշակման (գինու, կոնյակի և պահածոների) և շինանյութերի արդյունահանման ձեռնարկություններով: Արարատի տրավերտինների և կավերի հանքավայրերի հենքի վրա 1933թ.-ից գործում է Արարատի ցեմենտի գործարանը: Ներկայումս շահագործվում են նաև տրավերտինների և ավազների մի քանի հանքավայրեր (Գոռավան, Արտավազդ, Լուսառատ, Եղեգնավան և այլն): Գործում են նաև մի շարք քարամշակման արտադրանասեր: Վառելիքաէներգետիկ հումքի և անտառանյութի պահանջները բավարարվում են ներմուծման հաշվին: Շրջանն ապահովված է էլեկտրաէներգիայով, որը մատակարարվում է հանրապետական միացյալ էներգացանցից:

2.2. Հանքավայրի երկրաբանական կառուցվածքը

Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի տեղանքի ակումուլյատիվ հունադարավանդային հարթավայրը առաջացել է Արաքս գետի մեանդրման արդյունքում և ներկայացված է գետի մշտական հոսքի մակարդակից 2.5-3մ բարձրությամբ վերհունային առաջին դարավանդով և պլիոցեն-հոլոցենի հասակի այլուվիալ այլուվիալ-պրոլյուվիալ նստվածքներից կազմված Արարատյան հովտի ստորին դարավանդով և մեղմաթեք հարթավայրի ողողահունային հատվածով (Նկ. 2.1): Արարատյան իջվածքը ներկայացված է միոցեն-պլիոցենի և հոլոցենի մինչև 500մ հզորությամբ լճագետային նստվածքներով: Արարատյան գոգավորության ընդհանուր իջեցման հետևանքով Արաքսի, Հրազդանի և Ագատի գետահուներում կուտակվել են կոպճի, ավազի և կավի հզոր նստվածքներ: Արաքս գետի հովտի այլուվիալ նստվածքների հզորությունը հասնում է մինչև 70մ, ինչը վկայում է դրա ինտենսիվ ակումուլյատիվ-երոզիոն գործունեության մասին:

Գետամեջի հանքավայրի հարակից տարածքի հիմնականում զբաղեցնում են Արաքս գետի հունից մոտ 3մ բարձրություն ունեցող վերհունային դարավանդները: Վերջիններիս աստիճանները հղկված են և առաջացնում են գետի երկայնությամբ ցած, հարթ, դեպի հունը մեղմ թեքված լանջեր, որոնք գարնանային շրջանում երբեմն ծածկվում են վարարող ջրերով: Դարավանդները կազմված են հիմնականում այլուվիալ առաջացումներից, որոնք ներկայացված են երբեմն տիղմակավային փոքր ենթաշերտեր և ոսպնյակներ ներփակող ավազներով, հազվադեպ կոպճային տարահատիկ ավազներով, երբեմն մանրազլաքարերի պարունակությամբ:

Հրազդանի ու Ագատի գետաբերանների միջև Արաքսի ձախափնյա մասում տարածվում են, սակավաջուր շրջանում գետից մինչև 2.0-2.5 մ բարձրությամբ ողողահունային տարածքները, որոնք ի տարբերություն վերհունային դարավանդներից, գետի գարնանային վարարումների ժամանակ յուրաքանչյուր տարի ծածկվում են վարարող ջրերով: Ողողահունի չափերը և դրանցում նստվածքների կազմը կապված են մեանդրող գետի ափին դրանց տեղադիրքից: Ողողահունային նստվածքները, հիմնականում ներկայացված են ավազակոպճային նյութով, կոպճային տարահատիկ ավազներով, երբեմն ավազներով:

Շերտագրական կտրվածքը ներկայացված է հետևյալ տեսքով (ներքևից վերև)։

Պալեոզոյ

Վերին դևոն – Շերտագրական կտրվածքի (մերկացված մասի) ամենահին ապարները ներկայացված են այս հասակի կրաքարերով, քվարցիտներով, թերթաքարերով և ավազաքարերով, որոնց ընդհանուր հզորությունը 600մ է: Դևոնի առաջացումները հիմնատակվում են պրոտերոզոյ-ստորին պալեոզոյան հասակի մետամորֆային կոմպլեքսի ապարներով, որոնք հորատանցքերով հատվել են տարբեր խորությունների վրա:

Ստորին կարբոն – Ներկայացված են վիզեյան-տուրնեյան հարկերի կրաքարերով, քվարցիտներով, թերթաքարերով և ավազաքարերով: Կարբոնի հասակի ապարների ընդհանուր հզորությունը 200մ է:

Մեզոզոյ

Տարածաշրջանում լայն տարածում ունեն այս դարաշրջանի հրաբխածին-նստվածքային առաջացումները, որոնք մերկանում են շրջանի արևելյան մասում (բերված երկրաբանական քարտեզի սահմաններից դուրս) և ներկայացված են վերին կավճի տարբեր հարկերի հրաբխածին-նստվածքային ու նստվածքային առաջացումներով, որոնց ընդհանուր հզորությունը մոտ 850մ է: Վերին կավճի առաջացումնրը հորատանցքերով հատվել են տարբեր խորությունների վրա, անկյունային և շերտագրական աններդաշնակությամբ տեղադրված են պալեոզոյի ապարների վրա:

Տուրոն-ստորին կոնյակ – Ներկայացված է պորֆիրիտներով և սրանց ենթակա կրաքարերի ոսպնյակներով և ենթաշերտերով:

Վերին կոնյակ – Ներկայացված է հիմքի կոնգլոմերատներով, ավազաքարերի կոնգլոմերատների, կրաքարերի և կավերի շերտադարսվածքով:

Վերին սենոն (կամպան-մասսոթիխտ) – Ներկայացված է հիմքի կոնգլոմերատներով, կրային մերգելներով, կրաքարերով:

Պալեոգեն

Այս հասակի ապարները տարածաշրջանում ներկայացված են ստորին, միջին և վերին բաժինների տարբեր հարկերի առաջացումներով, որոնք աննշան անկյունային աններդաշնակությամբ ծածկում են վերին կավճի նստվածքներին: Սրանց ընդհանուր հզորությունը 750-800մ է: Բերված երկրաբանական քարտեզի սահմաններում այս համակարգի ապարները հատված են հորատանցքերով և ներկայացված են **վերին օլիգոգեն-ստորին միոգենի** հասակին վերագրվող խայտաբղետ կավերի (առավելապես՝ կարմրագույն և

հաճախ՝ գիպսաբեր) միկրոկոնցլոմերատների, նուսուլիտային ավազաքարերի, կոնցլոմերատների, այրվող թերթաքարերի հերթափոխվող շերտախամբով (Հացավանի շերտախումբ): Այս ապարների ընդհանուր հզորությունը մոտ 1000մ է:

Չորրորդական և ժամանակակից առաջացումներ

Չորրորդական ժամանակաշրջանում Արարատյան գոգավորության ընդհանուր իջեցման հետևանքով ձևավորված լճային ավազանում կուտակվել են կոպճի, ավազի և կավի հզոր նստվածքներ, որոնք ուսումնասիրվել են բազմաթիվ հորատանցքերով: Այս համակարգի կտրվածքում առանձնացվում են Արարատյան գոգավորության վերին չորրորդականին վերագրվող ստորին դարավանդի լճային-այրուվիալ նստվածքների հորիզոնը (հզորությունը մոտ 50մ): Այս նստվածքները հիմնականում ներկայացված են լճային-այրուվիալ կավերով, ավազակավերով և ավազներով:

Մեծ տարածում ունեն նաև ժամանակակից այրուվիալ, պրոյուվիալ և դեյուվիալ առաջացումները: Արաքս գետի հովտի այրուվիալ-պրոյուվիալ փուխր առաջացումները ներկայացված են տարատեսակ ավազակոպճային և ավազային նստվածքներով, որոնց հզորությունը հասնում է մինչև 20մ-ի, ինչը վկայում է դրա ինտենսիվ ակումուլյատիվ-էրոզիոն գործունեության մասին: Վերջիններիս հետ ծագումնաբանորեն կապված է Առափի ավազի հանքերնակման օգտակար հաստվածքը:

Տեկտոնական տեսակետից շրջանը հարում է Մերձարաքսյան միոգենոսինկլինալային և Միջինարաքսյան միջլեռնային իջվածքի միակցման գոտուն՝ Արարատի բարձրացումին: Վերջինս հերցինյան հիմքի էլուստ է, ունի հյուսիս-արևելյան տարածում և սահմանափակվում է Երևանի և Արարատի խորքային բեկվածքներով:

Օգտակար հանածոն նախատեսված է օգտագործել որպես շինանյութ: Այդ իսկ պատճառով, հումքի որակական հատկանիշները, պետք է բավարարեն ,Ավազ շինարարական աշխատանքների համարե 8736-95 ՀՍՏ ԳՈՍՏ և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍՏ ԳՈՍՏ պահանջների:

Ավազների լաբորատոր ուսումնասիրությունները կատարվել են ՀՀ Երկրաբանության վարչության «ԱՆԱԼԻՏԻԿ» ՓԲԸ-ում ոչ մետաղային օգտակար հանածոների ուսումնասիրման լաբորատորիայում:

Լաբորատոր ուսումնասիրության են ենթարկվել 9 նմուշներ, ըստ վերը նշված պետ

ստանդարտների պահանջների:

Բոլոր նմուշների կրճատումից և խառնումից վերցված է մեկ նմուշ քիմիական անալիզի համար: Նմուշներում կոպիճի պարունակությունը տատանվում է 21.5%-ից մինչև 68%, այդ իսկ պատճառով օգտակար հանածոն կորակավորվի որպես ավազակոպճային խառնուրդ:

Կոպիճների հատիկային կազմը տատանվում է 5-20 մմ: Ըստ մանրացման մակնիշի, կոպիճը պատկանում է D_p-8 դասին, ըստ մաշվելիության՝ N-1 դասին: Փափուկ ապարների հատիկների պարունակությունը տատանվում է 0.5-3%: Կավային մասնիկները 0.5-1%, ցրտադիմացկունությունը՝ M_{ps}-25, կողմնակի խառնուրդներ չկան:

Հանքավայրում, համաձայն «Ավազ շինարարական աշխատանքների համար» 8736-95 ՀՍՏ ԳՈՍՏ պետստանդարտի, ավազները պատկանում են 1-2 խմբին: Ավազն ըստ խոշորության մոդուլի բաժանվում է շատ մանրահատիկ M_k <0.7մմ, միջահատիկ՝ M_k >2.3-2.5մմ և խոշորահատիկ՝ M_k>2.6: Փխրեցման միջին գործակիցը կազմում է 1.1, կավային և տիղմային մասնիկների պարունակությունը 0.5-3% է, որը նորմային մոտ է, օրգանական խառնուրդներ չկան, 0.63 մմ մաղի վրա մնացորդը նորմային մոտ է: Հիմնային միջավայրում լուծվող սիլիկահողի երկօքսիդի պարունակությունը կազմում է 25-28 մմոլ/լիտր: Ծծումբի, սուլֆիդների և սուլֆատների պարունակությունը վերահաշվարկված է 0.17%: Ածխի և փայլարների մնացորդներ չկան:

Ներքո բերվում են Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի ֆիզիկամեխանիկական ցուցանիշները:

Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի

ֆիզիկամեխանիկական ցուցանիշները

Համեմատական կարգով կարելի է եզրակացնել՝ ավազակոպճային խառնուրդը պետրոքիմիական տեսակետից կապված է միջին թթվայնության ապարների՝ գաբրո-դիորիտների, անդեզիտա-բազալտների և անդեզիտադագիտների էոզոլայի հետ:

Ավազները պոլիմիկտային կազմի են, գերակշռող են ֆեմիկ միներալները, ներկայացված ամֆիբոփի և պիրոքսենի անկանոն հատիկներով: Քվարցի և կարբոնատի հատիկները կազմում են զանգվածի 10-15%-ը, հանքային միներալները քիչ են հանդիպում: Ներկայացված են պիրիտի, հեմատիտի, իլմենիտի, մագնետիտի և քրոմիտի հատիկներով:

Ամփոփելով, անհրաժեշտ է նշել հետևյալը.

Գետամեջի հանքավայրում ավազակոպճային խառնուրդը իր ֆիզիկա մեխանիկական ցուցանիշներով լիովին պիտանի է M-200, M-350 մակնիշի բետոնի արտադրության համար, որը կարող է օգտագործվել հիդրոտեխնիկական կառույցներում:

Ավազը լիովին պիտանի է բետոնյա հենասյուների, ճնշումնային ջրատար խողովակների և շինարարական այլ կառուցվածքային կոնստրուկցիաների արտադրության համար:

Խառնուրդը լիովին պիտանի է խոշոր արտադրական կառույցներում հիմնատակի և հատակի բետոնապատման համար:

Ֆիզիկամեխանիկական ցուցանիշները Նմուշի համարը և վերցման վայրը	Ծավալային կշիռը կգ/մ ²		Տեսակարար կշիռը գր/սմ ³	Ջրակալունությունը	Կավային մասնիկները %	Ավազի սպարունակ, խստոնություն %	Կոպիճի սպարունակ	Փխրեցման գործակիցը
	թափված (փխրեցված)	հոծ զա						
1 - Հորատանցք 1	1357	1499	12.76	-	1.3	99	1	1.1
2 - Հորատանցք 2	1706	1801	2.76		1.7	58.2	-	1.05
	1632	1757	2.75	0.7	0.7	-	41.8	1.08
3 - Հորատանցք 3	1517	1723	2.72		2.91	66.62		1.14
	1620	1750	2.74	0.8	1	-	33.38	1.08
4 - Հետախուզահոր 1	1675	1828	2.78	-	0.52	75.57		1.09
	1652	1818	2.77	0.75	0.5	-	24.4	1.11
5 - Հետախուզահոր 2	1649	1888	2.75	-	3.0	18.5		1.14
	1610	1750	2.74	0.68	0.8	-	21.5	1.09
6 - Հետախուզահոր 3	1668	1808	2.78		1.0	31.48	-	1.08
	1610	1730	2.77	0.71	1.0	-	68.5	10.7
7 - Հորատանցք 6	1675	1828	2.18		0.52	75.6		1.1
	1652	1828	2.77	0.75	0.5	-	24.4	1.1
8 - Հորատանցք 5	1517	1123	2.72		2.91	66.60		1.14
	1620	1150	2.74	0.8	1		33.4	1.08
9 - Հորատանցք 4	1649	1888	2.75		3.0	78.5		1.14
	1610	1750	2.74	0.68	0.8		21.5	1.09
Ընդամենը՝ ավազ	13056	14487	24.8	-	16.89	531.07		9.89
Միջինը	1632	1810	2.76	-	1.8	66.38		1.109
Ընդամենը՝ կոպիճ	13006	14133	24.78	5.87	6.3		268	8.7
Միջինը	1625	1767.1	2.75	0.73	0.87		33.6	1.09

2.3. Նախատեսվող գործունեության բնութագիրը

Քետամեջի հանքավայրի հունային ավազների շերտի պաշարների հաշվարկի համար հիմք են ծառայում հետևյալ կոնդիցիոն ցուցանիշները.

Հանքավայրում ավազը և կոպիճը պետք է բավարարեն «Ավազ շինարարական

աշխատանքների համար» 8736-95 ՀՍԳ ԳՈՍՍ և «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» 8267-95 ՀՍԳ ԳՈՍՍ պահանջների:

Ռադիացիոն-հիգիենիկ տեսակետից օգտակար հանածոն պետք է բավարարի ՀՊԵ 76/87 և ՕՇՊ 70/784 պահանջներին:

Սույն աշխատանքային նախագծով նախատեսվում է

- 1.** Հանքավայրի մշակումը կատարել բաց լեռնային աշխատանքներով:
- 2.** Օգտակար հանածոն վաճառել տեղում գնորդի մեքենաներով:
- 3.** Արդյունահանման աշխատանքները կատարել էքսկավատոր ՅՕ-5111 մակնիշի դրագլայնով:
- 4.** Արդյունահանման աշխատանքները իրականացնել 20 տարում:
- 5.** Ընդհանուր մարվող պաշարները կազմում են՝ 584200 մ³:
- 6.** Մարվող պաշարները կազմում են- 29210 մ³/տարի:
- 7.** Կորզվող պաշարների քանակը – 27750մ³/տարի:
- 8.** Բացահանքերի օտարման տարածքը կազմում է 1.27 հա:
- 9.** Տարեկան մարվող պաշարները կազմում են 29210մ³:
- 10.** Բացահանքի տարեկան արտադրողականությունը ըստ ավազի զանգվածի կազմում է՝ մարվող պաշարները-29210 մ³, կորզվող պաշարները- 27750մ³:

Լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են և հնարավորություն են տալիս հանքավայրը մշակել բաց լեռնային աշխատանքներով:

Մշակման եղանակի ընտրումը

Արարատի մարզի Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի բացահանքի նախագիծը կատարված է «ԱՎԵՏԻՍ-ՏԻԳՐԱՆ» ՍՊԸ-ի տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են և հնարավորություն են տալիս հանքավայրը մշակել բաց լեռնային աշխատանքներով:

Օգտակար հանածոյի մարվող պաշարները շահագործման ամբողջ ժամանակաշրջանի համար կազմում են՝ 29210 մ³ մարվող պաշար :

- օգտակար հանածոյի կորզվող պաշարները կազմում են՝ 27750մ³:

Բացահանքը վերջնական դիրքում ունի հետևյալ պարամետրերը.

- ամենամեծ երկարությունը - 206մ:
- ամենամեծ լայնությունը -54մ:
- ամենամեծ խորությունը - 4մ:
- օտարման տարածքը 1.27հա:

Յուրաքանչյուր տարի, սեզոնի սկզբում անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնանախապատրաստական աշխատանքները.

- Բացահանքի ջրհեռացման առվի կառուցում յուրաքանչյուր տարի բացահանքի հարավ արևելյան մասերից,

- օգտակար հաստաշերտի մակերևույթին տրանսպորտային սարքավորումների և էքսկավատորի շարժման ուղեծրով ПБЖ-32 մակնիշի փոխադրվող երկաթբետոնե տիպային սալիկների տեղադրում:

Բացահանքի հիմնական տեխնոլոգիական սարքավորումներն են՝

- էքսկավատոր - ЭО-5111 դրագլայն,
- բուլդոզեր-S-130,

Բացահանքի աշխատողների թիվը՝ 9 մարդ:

Բացահանքում խմելու ջրով բանվորներին ապահովում են անհատական տափաշներից: Տեխնիկական ջուր պահանջվում է բացահանքի սահմաններից դուրս ավտոճանապարհների ջրման համար: Ավտոճանապարհների ջրումը կատարվում է КО-002 ջրցան լվացող ավտոմեքենայով:

Նախագծային կորուստներ

Բացահանքը շահագործելիս առաջանում են կորուստներ, որոնք պայմանավորված են՝ արդյունահանման ժամանակ՝ բարձման և տեղափոխման ընթացքում:

Կորուստները կկազմեն՝ 1483,5մ³ կամ 5%:

Բացահանքի արտադրողականությունը և աշխատանքի ռեժիմը

Բացահանքի տարեկան արտադրողականությունն ըստ ավազի զանգվածի կազմում է.

29210 X (100-5)

$$Q = \frac{\dots}{100} = 27750 \text{մ}^3$$

որտեղ՝ 5%-ը օգտակար հանածոյի կորուստներն են արդյունահանման ժամանակ;
 29210մ³-ը, - Բացահանքի վերջնական եզրագծի մեջ ներառված արդյունաբերական պաշարների քանակն է:

Աշխատանքային օրերի քանակը տարում ընդունվում է 176 օր, աշխատանքային հերթափոխի քանակը՝ օրվա մեջ - 1, հերթափոխի տևողությունը – 8.0 ժամ:

Բացահանքի հաշվարկային օրեկան /հերթափոխային/ արտադրողականությունն ըստ ավագային խառնուրդի զանգվածի կլինի.

$$27750/176=158 \text{ մ}^3:$$

Բացահանքի բացումը

Հանքավայրում մակաբացման և լեռնակապիտալ բնույթի այլ աշխատանքներ չեն կատարվի: Հանքավայրը նախկինում շահագործվել է: Այն կմշակվի մեկ հորիզոնով մինչ շերտի հատակը՝ մինչև 4մ խորությամբ խրամուղու անցումով: Աշխատանքների ուղղությունը կլինի հյուսիս- արեւմուտքից դեպի հարավ-արևելք:

Խրամուղու անցումը կիրականցվի ՅՕ-5111 մակնիշի դրագլայնով, որի շերտի տարողությունը 1.2մ³ է, իսկ սլաքի երկարությունը՝ 12.5մ:

Խրամուղու լայնությունը մակերեսում կլինի 20-25մ, հատակում՝ 15-20մ, կողերի թեքությունը՝ 40°: Շահագործումը կիրացվի դրագլայնի 3-ից 4 քայլերով:

Մակաբացման ապարների հեռացումը

Բացահանքը ծածկող ժամանակակից առաջացումները (մակաբացման ապարները) բացակայում են:

Մշակման համակարգը

Հանքավայրի շահագործման ժամանակ ընդունված է ընդլայնական ընթացքաշերտերով միակողանի մշակման համակարգ:

Ընդունված մշակման համակարգը ունի հետևյալ տարրերը՝

- աստիճանի առավելագույն բարձրությունը 4.0մ:
- աստիճանի թեքության անկյունը՝

- աշխատանքային -70°;
- ոչ աշխատանքային (մարված)- 70°;
- ընթացքաշերտի լայնությունը -8.5մ;
- էքսկավատորի աշխատանքի անվտանգ գոտու շառավիղը – 18.0մ;
- Աշխատանքային հրապարակի լայնությունը – 20.0մ:

Տրանսպորտային աշխատանքներ

Արդյունահանված ավազի տեղափոխումը կիրականցվի սպառողների տրանսպորտային միջոցով:

Բացահանքի մշակման ժամանակացույցային պլանը

Ավազների արդյունահանումը բացահանքի սահմաններում կատարվում է բացահանքի մշակման ժամանակացույցային պլանին համապատասխան, ըստ որի նախատեսվում է օգտակար հաստաշերտի մշակումը կատարել մեկ աստիճանով, ամբողջ հզորությամբ ընդլայնական ընթացքաշերտերով:

Տարեկան արդյունահանվող ավազի ծավալը կազմում է՝ 27750մ³:

Լեռնակապիտալ աշխատանքները

Լեռնային աշխատանքների կազմակերպման և ավազների արդյունահանումն իրագործելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ աշխատանքներ՝

- 1.** Մոտեցող բնահողային ավտոճանապարհների կարգաբերում - 1300մ²,
- 2.** Դրենաժային (ցամաքեցման) առվի կառուցում բացահանքի հարավ արևելյան մասից միջինը 525մ³;

Արդյունաբերական հրապարակի կարգաբերում- 220մ²:

2.4. Այլընտրանքային լուծումներ

Այս տիպի հանքավայրերի շահագործման այլընտրանքային լուծում ներկայացվել չի կարող, քանի որ նման հանքավայրերը արդյունահանվում են միայն բացահանքով էքսկավատոր- բուլդոզեր-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրի կիրառմամբ, ամբողջհզորությամբ:

Քանի որ հանքավայրը պատկանում է վերականգնվող պաշարներով հանքավայրերի թվին, այլընտրանքային լուծումներ չեն կարող ներկայացվել նաև

բացահանքի տարածքի ռեկուլտիվացիայի մասով: Այն յուրաքանչյուր տարի, վարարման շրջանում, լցվում է Արաքս գետի բերվածքային առաջացումներով:

Այլընտրանքային լուծումներ դիտարկվում են արդյունաբերական և աշխատանքային հրապարակների և ճանապարհի վերականգնման կենսաբանական փուլի շրջանակներում: Բացի լեռնատեխնիկական վերականգնման աշխատանքներից նախատեսվում է իրականացնել կենսաբանական ռեկուլտիվացիա, երբ հարթեցված և փխրեցված տարածքում կատարվելու է պարարտացում և բույսերի տնկում:

Աշխատանքներից հրաժարման (գրոկայական) տաբերակը դիտարկվում է որպես տնտեսապես ոչ նպատակահարմար: Ներկայումս շինանյութերի շուկայում արձանագրվել է ավազի և ավազակոպճային խառնուրդի դեֆիցիտ, ինչը հանգեցրել է հումքի վաճառքի գների աճին և, ընդհանուր առմամբ, շինարարության բնագավառում ընդհանուր գնաճին:

Հետևաբար, հանքավայրի շահագործման հետ կապված երկարաժամկետ կտրվածքով ստեղծվելիք նոր աշխատատեղերը կնպաստեն մարզում գործազրկության նվազեցմանը և կենսամակարդակի կայուն աճին:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

3.1. Երկրաձևաբանություն, լանջերի թեքություն, սողանքային երևույթներ, սեյսմիկ պայմաններ

Երկրաձևաբանական տեսակետից հանքավայրի տարածքը հարում է Արարատյան գոգավորության մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°:

Հանքավայրի տարածքի բարձրությունը տատանվում է 818-820մ-ի սահմաններում :


Տեկտոնական տեսակետից շրջանը հարում է Մերձարաքսյան միոգենոսինկլինալային և Միջինարաքսյան միջլեռնային իջվածքի միակցման գոտուն՝ Արարատի բարձրացումին: Վերջինս հերցինյան հիմքի ելուստ է, ունի հյուսիս-արևելյան տարածում և սահմանափակվում է Երևանի և Արարատի խորքային բեկվածքներով:

Արարատյան դաշտն ունի 100կմ երկարություն, լայնությունը հյուսիս-արևմտյան մասում հասնում է 15-17կմ, հարավ-արևելյան մասում 4-5կմ: Մակերևույթն ընդհանրապես տափարակ է, աջից ու ձախից փոքր թեքությամբ դեպի Արաքս գետը: Վերջինիս հոսքի ուղղությամբ այն հավասարաչափ իջնում է կիլոմետրում 1.75մ :


Արարատյան դաշտը մակերեսից ծածկված է նորագույն այլուվիալ բերվածքներով, որոնք Արաքսի հունից դեպի նախալեռներ կրում են զգալի փոփոխություններ :

Շրջանի լեռների երկրաձևաբանական և մակերևույթի թեքության անկյունների սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 4 և 5-ում:

Հանքավայրի շրջանում արտաձին երկրաբանական պրոցեսներ արտահայտված չեն, ինչը պայմանավորված է տարածքի երկրաձևաբանական առանձնահատկություններով:



Նկար 4.



Նկար 5.

Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Մեյսակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N24-Ն հրամանի՝ հանքավայրի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն /նկար 6/:

Համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 10-ի N 919-Ն որոշման հավելված 3-ի՝ ուժեղ երկրաշարժի դեպքում հանքավայրին մոտ գտնվող Արտաշատ բնակավայրում երկրաշարժի ուժգնությունը ըստ MSK-64 սանդղակի կկազմի 8 բալ:




Նկար 6.

3.2. Շրջանի կլիման

Տեղամասի շրջանի կլիման չոր ցամաքային է: Ամառը շոգ է, տևական (4-5 ամիս): Հուլիսի միջին ջերմաստիճանը 26-27°C է: Բնորոշ են լեռնահովտային քամիները: Ձմեռը ցուրտ է, անամպ, անհողմ: Հունվարի միջին ջերմաստիճանը -4-ից -6°C է:

Հաստատուն ձնածածկույթ ամեն տարի չէ, որ ձևավորվում է: Ընդհանուր Արարատյան դաշտի գոգ բնույթի հետևանքով ձմռանը դիտվում է ջերմաստիճանի շրջադասություն. դաշտում այն լինում է ավելի ցածր, քան շրջակա նախալեռներում: Գարունը կարճատև է: Բնորոշ են անկայուն եղանակները և համեմատաբար առատ տեղումները: Հրաշալի է արևոտ, տևական աշունը: Տարեկան միջին ջերմաստիճանը 8-12°C է, առավելագույնը՝ 42°C, նվազագույնը՝ -30°C, տարեկան միջին տեղումները՝ 300-350 մմ (առավելագույնը՝ ապրիլ-մայիս ամիսներին):



Նկար 7.

Օդի տարեկան միջին հարաբերական խոնավությունը՝ 61%, հունվարին՝ 80%, հուլիսին՝ 45%: Արևափայլի տարեկան տևողությունը հասնում է 2800 ժամի: Ռադիացիոն տարեկան հաշվեկշիռը կազմում է 62.0 կկալ/սմ²:

Շրջանին բնորոշ լեռնահարթավայրային քամիները առավել ուժեղ արտահայտվում են ամռան ամիսներին:

Նրանց արագությունը երբեմն հասնում է մինչև 15 մ/վ: Ամռանը՝ Իրանից և Մերձկասպյան տարածքներից, մերթընդմերթ փչում են տաք, չոր քամիներ: Ձմռանը գերակշռում են թույլ քամիները:

Ներկայացվում է կլիմայական հիմնական տարրերը՝ օդի ջերմաստիճան, մթնոլորտային տեղումներ, օդի հարաբերական խոնավություն, քամի, աղյուսակային տեսքով, ըստ Արտաշատ օդերևութաբանական կայանի՝ համաձայն Շինարարական կլիմայաբանություն ՀՀՇՆ-22-01-2024 տեղեկագրի:

Օդի ջերմաստիճան

Բնակավայրի օրերնութաբանական կայանի անվանումը	Բարձրությունը լից. մ	Միջին ջերմաստիճանը ըստ ամիսների, °C												Միջին տարեկան °C	Բացարձակ վազա - գույն. °C	Բացարձակ բացառական լից. °C
		Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արտաշատ	829	-3.6	0.9	5.6	12.7	17.5	21.5	25.3	24.8	19.8	13.0	6.0	-0.6	11.8	-29	43
Երևան «Էրեբունի»	888	-3.6	1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի, օրերնութաբանական կայանի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %														
	ըստ ամիսների												Միջին տարեկան, %	Միջին ամսական մ ամիս 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		ամենացուրտ ամսվա, %	ամենաշոգ ամսվա, %
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Արտաշատ	78	73	63	58	59	54	51	52	57	68	73	79	64	64	32
Երևան «Էրեբունի»	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	67	28

Մթնոլորտային տեղումները և ձնածածկույթը

Բնակավայրի, օրերնութաբանական կայանի անվանումը	միջին ամսական													Ձնածածկույթ		
	Տեղումների քանակը օրական առավելագույն, մմ													Առավելագույն տարեկան ընդհանուրը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթի օրերի քանակը	Չյան մեջը իառավելագույնը, մմ
	ըստ ամիսների															
Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան	15	16	17	
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17
Արտաշատ	18	18	27	36	40	25	11	6	10	22	24	17	254	40	36	46
Երևան «Էրեբունի»	18	20	32	36	43	34	27	22	28	36	31	25	43	58	47	



Քամի

Բնակավայրի, օդերևութաբանական կայանի անվանումը	Միջին տարեկան մթնոլորտային ձնշում, (հՊա)	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Անհող մուծությունների կույնե լիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով (≥15մ/վ) օրերի քանակը	Հաշվարկային արագությունը, մ/վ, որը հնարավոր է մեկ անգամ «տ» տարիների ընթացքում	
			Միջին արագությունը, մ/վ												25	100
			Հյուսիսային (Հս)	Հյուսիս-Արեւելյան (ՀսԱրլ)	Արեւելյան (Արլ)	Հարավ-Արեւելյան (ՀվԱրլ)	Հարավ (Հվ)	Հարավ-Արեւմտյան (ՀվԱրմ)	Արեւմտյան (Արմ)	Հյուսիս-Արեւմտյան (ՀսԱրմ)						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	11	1
Արտաշատ	920,2	հունվար	7	8	10	20	12	10	15	18	88	0,3	0,4	7	22	2
			1,7	1,7	2,7	3,1	2,4	2,0	2,2	1,7						
		ապրիլ	4	9	12	27	13	8	13	14	74	0,6				
			1,7	1,8	2,1	2,8	2,5	2,8	2,8	2,6						
		հուլիս	8	7	9	16	9	9	18	24	80	0,4				
			1,7	1,9	1,7	2,0	2,0	2,0	2,7	2,3						
		հոկտեմբեր	7	12	12	19	8	10	16	16	85	0,3				
			1,6	1,5	2,1	2,0	1,5	2,1	2,4	2,0						
Երևան «Էրեբունի»	912,1	հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0,7	1,5	29	22	2
			2,2	2,2	2,2	2,9	2,7	2,3	2,6	2,7						
		ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1,9				
			3,1	3,2	2,8	4,0	3,1	3,0	3,8	3,6						
		հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2,8				
			5,2	5,7	2,8	2,7	2,4	2,7	2,9	4,3						
		հոկտեմբեր	6	18	10	10	21	20	10	5	63	1,0				
			2,9	2,5	2,1	2,5	2,3	2,4	2,9	3,5						

Աղյուսակ 2 Օդի միջին ջերմաստիճան (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
23. Երևան «Էրեբունի»	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Աղյուսակ 11 Օդի հարաբերական խոնավությունը (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %																
	ըստ ամիսների												Միջին տարեկան	Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր		Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին	Միջին ամսական	Միջին ամսական, ժամը 15-ին
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18
18. Երևան «Էրեբունի»	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	79	67	45	28

Աղյուսակ 13 Մթնոլորտային տեղումները (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը — միջին ամսական — մմ օրական առավելագույն													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների												Տարեկան		
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
22. Երևան «Էրեբունի»	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	128	163
	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		

ՁՅԱՆ ԾԱԾԿՈՒՅԹ

Աղյուսակ 14 **Ձյան ծածկույթ** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ձյան ծածկույթը			
	Առավելագույն տասնորյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ	Գրունտի սառչման առավելագույն խորությունը, սմ
1	2	3	4	5
30. Երևան «Էրեբունի»	58	47	-	60

ՔԱՄԻ

Աղյուսակ 15 **Քամի** (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %								Միջին կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Ֆերակշտոլ ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Ֆերակշտոլ ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ
		Միջին արագությունը, մ/վ				ըստ ուղղությունների									
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ- արևելյան	Հարավային	Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան						
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
18. Երևան «Էրեբունի»	հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	<վ	2.4	<վ	2.7
		2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7						
	ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1.9				
		3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6						
	հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8				
		5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3						
	հոկտեմբեր	6	18	10	10	21	20	10	5	63	1.0				
		2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5						

3.3 Մթնոլորտային օդ

Մթնոլորտային օդի մոնիտորինգի դիտակայան Գետամեջի հանքավայրի տարածքի մոտակայքում չկա:

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ նաև հաշվարկային եղանակով: Դրա համար ՀՀ բնապահպանության նախարարության (ներկայումս՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը) «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի

կենտրոն» (ներկայումս «Հիդրոօդերոնթաբանության և մոնիթորինգի կենտրոն») ՊՈԱԿ կողմից մշակվել է ուղեցույց ձեռնարկ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից:

Բնակչության քանակը (հազ.)	Որոշված նյութերի ֆոնային կոնցենտրացիաները (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

Ազդակիր Բուրաստան գյուղի բնակչությունը չի գերազանցում 2հազ. մարդ: Այս բնակավայրի համար օդի ֆոնային աղտոտվածության տվյալները (ըստ աղյուսակի) կլինեն՝ փոշի 0.2մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.02մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.008մգ/մ³, ածխածնի օքսիդ 0.4մգ/մ³:

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO2)	Ազոտի երկօքսիդ (NO2)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Քաղաք	Աղտոտող նյութ	Միջին հնգամյա կոնցենտրացիա (Ֆոն), մգ/մ ³
Երևան	Ազոտի երկօքսիդ	0.026
	Ծծմբի երկօքսիդ	0.017
	Ածխածնի օքսիդ	1.5
	Փոշի	0.142
Արարատ	Ազոտի երկօքսիդ	0.018
	Ծծմբի երկօքսիդ	0.026
	Փոշի	0.110

3.4 Ջրային ռեսուրսներ

Գետամեջի հանքավայրի շրջանի տարածքով հոսում են Հրազդան և Այդր լճից սկիզբ առնող Սևջուր գետը, հարավում՝ պետական սահմանի երկարությամբ՝ Արաքս գետը:

Հանքավայրի տարածքը գտնվում է Արաքս գետի ձախափնյա ողողահունային մասում: Արաքս գետը սկիզբ է առնում Բյուրակն հրաբխային բարձրավանդակից (մոտ 3000մ բարձրությունից), մինչև Արարատյան դաշտ մտնելը հոսում է նեղ կիճերով, տեղ-տեղ՝ լայնացված հովտով, ունի մեծ անկում: Գետի երկարությունը 1720կմ է, ավազանը՝ 102 հազ.կմ²: Այն սնվում է ձնհալքի, անձրևների և ստորերկրյա ջրերից: Հորդանում է մարտից հունիս ամիսներին, առավելագույն ծախսը դիտվում է մայիսին: Առաջին հորդացումը կապված է ցածրադիր վայրերի ձնհալքի և գարնանային անձրևների հետ, երկրորդը ավելի երկարատև է ու բուռն, առաջանում է լեռներում ձնհալքի հետևանքով: Ամենացածր մակարդակները լինում են հուլիս-օգոստոսին և ձմռանը: Երրորդ թույլ արտահայտված հորդացումը կապված է աշնանային անձրևների հետ: Արաքս գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները բերված են ստորև աղյուսակում:

Գետը	Ծախսը, մ ³ /վ	Տարեկան հոսքը, մլն.մ ³	Հոսքի մոդուլը, լ/վ կմ ²	Հոսքի շերտի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
Արաքս	86.2	272.4	3.90	123	-

Հայաստանի Հանրապետությունում մակերևութային, այդ թվում նաև Սևանա լճի

ջրերի որակի գնահատումը կատարվում է համաձայն ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի 75-Ն որոշման: Գնահատման համակարգը ջրի որակի յուրաքանչյուր ցուցանիշի համար տարբերակում է կարգավիճակի հինգ դաս՝ «գերազանց» (1-ին դաս), «լավ» (2-րդ դաս), «միջակ» (3-րդ դաս), «անբավարար» (4-րդ դաս) և «վատ» (5-րդ դաս): Ջրի որակի ընդհանրական գնահատականը ձևավորվում է վատագույն որակ ցուցաբերող ցուցանիշի դասով: Արաքս գետի ջրի որակի գնահատումը դեռևս կատարվում է 1990 թվականին ընդունված մակերևութային ջրերի աղտոտվածության ձկնաստնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների կիրառմամբ:


Ն մակերևութային ջրերի աղտոտվածության գնահատումը

2022 թվականի տվյալների համաձայն ՀՀ գետերի դիտակետերի 10%-ում ջրի որակը գնահատվել է 2-րդ դաս («լավ» որակ), 39%-ում՝ 3-րդ դաս («միջակ» որակ), 18%-ում՝ 4-րդ դաս («անբավարար» որակ) և 33%-ում՝ 5-րդ դաս («վատ» որակ):

ՀՀ գետերի ջրի որակի նկարագիրը 2021-2022 թվականներին



Փճապատկեր 2. Գետերի և ջրամբարների ջրի որակի նկարագիրը



Փճապատկեր 3. Գետերի ջրի որակի նկարագիրն ըստ ՋԿՏ-ների, 2022 թ.


ՀՀ մակերևութային ջրերի որակը / 2022 թվական



Արաքս գետ

Արաքս գետի 8 դիտակետից վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատեսական նորմերով գնահատման, գերազանցվել են թթվածնի քիմիական պահանջարկի, ամոնիում, նիտրիտ, սուլֆատ իոնների, նատրիումի, մագնեզիումի, պղնձի, քրոմի, նիկելի, մոլիբդենի, մանգանի, վանադիումի, երկաթի, ալյումինի և սելենի ՄԹԿ-ները (Աղյուսակ 23):

Արաքս գետի 3 դիտակետում ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսներին իրականացվել են հատակային նստվածքների ուսումնասիրություններ: Հատակային նստվածքներում որոշված ցուցանիշների մի մասը բերված է Աղյուսակ 33-ում:



Աղյուսակ 8. Արաքս գետի ջրում որոշված ցուցանիշների տարեկան միջին կոնցենտրացիայի գերազանցումը ՄԹԿ-ից 2022 թվականին:

Դիտակետի տեղադրություն (դիտակետի համար)	Գոնցենտրացիաների գերազանցումը ՄԹԿ-ից (անգամ)														
	Թթվածնի քիմիական պահանջ, ՄԹԿ=30 մգ/լ	Ամոնիում իոն, ՄԹԿ=0.39 մգ/լ	Նիտրիտ իոն, ՄԹԿ=0.024 մգ/լ	Մոլիբդեն իոն, ՄԹԿ=100 մգ/լ	Նատրիում ՄԹԿ=120 մգ/լ	Սազնեղում, ՄԹԿ=40 մգ/լ	Պղինձ, ՄԹԿ=0.001 մգ/լ	Քրոմ, ՄԹԿ=0.001 մգ/լ	Սիլեն, ՄԹԿ=0.01 մգ/լ	Մոլիբդեն, ՄԹԿ=0.5 մգ/լ	Մանգան, ՄԹԿ=0.01 մգ/լ	Վանադիում, ՄԹԿ=0.001 մգ/լ	Երկաթ, ՄԹԿ=0.5 մգ/լ	Ալյումին, ՄԹԿ=0.04 մգ/լ	Սելեն, ՄԹԿ=0.001 մգ/լ
0.9 կմ գ. Հուշակերտից ներքև (25)	-	-	-	-	-	-	4.1	3.3	-	-	5.5	8.7	-	13.8	-
Հրազդան գետի թափման կետից վերև (26)	-	4.0	7.6	1.3	-	-	11.6	6.6	2.0	0.3	12.7	14.6	1.8	23.3	2.5
Հրազդան գետի թափման կետից ներքև (27)	-	3.4	5.4	1.2	-	-	8.2	6.5	2.1	-	13.8	14.3	1.8	23.6	2.2
0.5 կմ ք. Արարատից ներքև (28)	-	-	2.6	-	-	-	13.7	7.5	3.3	-	20.7	15.8	2.7	38.0	1.9
2 կմ ք. Ագարակից հարավ ((29) AMS-1)	-	1.3	3.1	2.0	-	1.2	5.1	5.7	-	-	7.6	16.7	1.4	10.8	8.2
2.5 կմ ք. Ագարակից հարավ-արևելք ((30) AMS-2)	-	1.7	3.0	2.1	1.3	1.4	14.6	7.3	-	-	8.1	20.9	1.9	13.1	8.4
Մեղրիգետի թափման կետից վերև (AMS-3)	1.2	1.9	1.8	1.7	-	-	15.2	5.3	-	-	7.9	15.0	2.1	12.9	11.5
Շվանիձորի գյուղից ներքև (AMS-6)	1.3	1.3	0.0	2.0	1.2	1.4	53.9	10.0	-	-	16.3	29.9	5.5	25.5	14.3

Աղյուսակ 9. Արաքս գետի հատակային նստվածքների մոնիթորինգի արդյունքները 2022 թվականին.

Գոնցենտրացիա, գ/կգ	Ագարակ քաղաքից 2 կմ հարավ (29) AMS-1)					Ագարակ քաղաքից 2.5 կմ ք. հարավ-արևելք (30) AMS-2)		Մեղրի գետի թափման կետից ներքև (AMS-3)			Շվանիձորի գյուղից ներքև (AMS-6)				
	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Հունիս	Օգոստոս	Ապրիլ	Մայիս	Հունիս	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս
Ալյումին	0.0100	0.8284	0.1011	0.0188	2.2274	0.4396	1.8462	1.5852	3.4678	2.1259	1.4261	4.0270	2.3327	1.4649	26.8170
Երկաթ	9.4914	16.2749	12.0314	3.3401	7.1380	19.0304	5.1883	18.5958	25.8315	19.3867	23.8421	51.0697	27.3613	12.5144	36.1179
Մանգան	0.8304	0.7907	0.2462	0.4621	0.6576	0.3664	0.5144	0.3046	0.1173	0.0494	0.3856	0.1644	0.1201	0.2682	0.4722
Նիկել	0.1889	0.1356	0.1407	0.1513	0.1456	0.1316	0.1568	0.0230	0.0071	0.0098	0.0875	0.0128	0.0750	0.0757	0.0963
Պղինձ	0.0524	0.0363	0.0407	0.0470	0.0527	0.5919	0.1771	0.8917	0.5697	0.8291	0.3515	0.7231	0.3274	0.4328	0.3753
Արսեն	0.0113	0.0119	0.0327	0.0135	0.0104	0.0386	0.0105	0.0091	0.0110	0.0244	0.0101	0.0210	0.0298	0.0109	0.0194
Մոլիբդեն	0.0012	0.0010	0.0012	0.0007	0.0009	0.0037	0.0063	0.0304	0.0423	0.0474	0.0459	0.0324	0.0400	0.0432	0.0308

ՀՀ մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտացանց

Դիտակ ետի համար	Ջրային օբյեկտ	Ջրավազանայ ին կառավարման տարածք	Մարզ	Տեղադիրք
26	Արաքս	Հրազդան	Արարատ	Հրազդան գետի թափ. կետից վերև
27	Արաքս	Արարատյան	Արարատ	Հրազդան գետի թափ. կետից ներքև
28	Արաքս	Արարատյան	Արարատ	0.5 կմ ք. Արարատից ներքև
29 (AMS-1)	Արաքս	Հյուսիսային	Սյունիք	2 կմ ք. Ագարակից հարավ
30 (AMS-2)	Արաքս	Հյուսիսային	Սյունիք	2.5 կմ ք. Ագարակից հարավ-արևելք
25	Արաքս	Ախուրյան	Արմավիր	0.9 կմ գյ. Հուշակերտից ներքև

3.5 Հողեր

Գետամեջի ավազակոպճային խոնուրդի հանքավայրի շրջանում զարգացած են գորշ և աղուտ-ալկալի մարգագետնային, ինչպես նաև գետահովտադարավանդային տիպի հողերը (հողերի բնական տիպերի բաշխվածությունը բերված է նկարում):

Մարգագետնային գորշ ոռոգելի հողերն տարածված են Արարատյան հարթավայրի համեմատաբար ցածրադիր թույլ թեք հարթություններում: Այս տիպի հողերում հողագոյացնող պրոցեսներն ընթացել են հիդրոմորֆ ռեժիմի պայմաններում: Ըստ խոնավության պայմանների և արտահայտվածության մարգագետնային գորշ ոռոգելի հողերը ստորաբաժանվում են երեք ենթատիպի՝ խոնավ մարգագետնային գորշ, մարգագետնային գորշ և մնացորդային մարգագետնային գորշ: Հումուսի քանակն առաջին երկու

ենթատիպերում կազմում է համապատասխանաբար 3-3.5% և 1.4-1.8%:

Մարզագետնային գորշ հողերի քիմիական հատկությունները հետևյալն են

Հողի տիպը և ենթատիպը	Խորությունը, սմ	Հումուս, %	CO ₂ , %	Կլանված հումքերի գումարը, մ.էկվ. 100գ հողում	Կլանված ռժմ-ը ընդհանուրում
1	2	3	5	6	7
Խոնավ մարզագետնային գորշ ոռոգելի	0-32	3.5	9.7	25.6	8.1
	32-62	3.2	10.8	23.6	8.4
	62-87	1.1	14.1	18.4	8.5
	87-125	0.8	1.3	13.5	8.2
	125-136	0.7	0.8	4.5	7.5
Մարզագետնային գորշ ոռոգելի	0-21	1.8	6.0	26.8	8.4
	21-43	1.6	6.3	28.0	8.4
	43-65	0.9	7.9	31.9	9.0
	65-92	0.8	6.8	22.0	9.4
	92-182	0.9	6.8	36.8	9.5


Այս հողերի ստրուկտուրան փոշեհատիկա-կնձիկային է, հիմնականում կարբոնատային:

Աղուտ-ալկալի հողերը աչքի են ընկնում խիստ թույլ հումուսացվածությամբ (մինչև 1%), բարձր հիմնայնությամբ, կարբոնատների զգալի պարունակությամբ (15-18%), շերտավորված մեխանիկական կազմով: Պրոֆիլում պարզորոշ առանձնացվում է մակերեսային աղային հորիզոնը, որտեղ հեշտ լուծվող աղերի քանակը 2% և ավելի է, սակայն դեպի ստորին շերտերը նրա պարունակությունը նվազում է: Հողերի գերակշռող մասին հատկանշական է փոխանակային նատրիումի բարձր պարունակությունը (առանձին շերտերում 20-25 մգ/էկվ):

Գետահովտադարավանդային հողերում ծագումնաբանական հորիզոնները թույլ են արտահայտված: Ունեն պարզ շերտավոր կառուցվածք, մեծ հզորություն և թեթև մեխանիկական կազմ (ավազային, կավավազային) և հատիկակնձիկային ստրուկտուրա: Հումուսի պարունակությունը 1,5-2-ից մինչև 4-6%: Հողային լուծույթի ռեակցիան հիմնականում չեզոք է կամ թույլ հիմնային: Կլանման տարողությունը մեծ չէ (15-25 մ.էկվ 100գ հողում), կլանված կատիոնների կազմում գերակշռողը կալցիումն է:

Հայցվող տարածքի հողերն աղտոտված չեն: Հայցվող տարածքի հողերը գյուղատնտեսական նշանակության, անօգտագործելի հողեր են: /հավելված բաժնում կցված է վկայականը/:

Ստորև ներկայացվում է հայցվող տարածքի հողերի տարածման սխեմատիկ քարտեզը



Նկար 8.

3.6 Բուսական և կենդանական աշխարհ

Գետամեջի ավազակույզային խառնուրդի հանքավայրի շրջանին բնորոշ է աղասեր անապատային բուսականությունը: Հիմնականում տարածված են հավամրգանման, ծառանման և նատրոային օջանները, մանրատերև սվեդան, մերձկասպյան աղահասկիկը, բիներցիան և այլն: Որոշ տարածքներ ծածկված են ավազասեր անապատային բուսական խմբավորումներով՝ սովորական տատաշը, նրբատերև հազարատերևուկը, եզնապտուկը, գիպասեր անապատներում՝ Թախտաջանի կաթնուկը, սապնարմատները: Բուսականության հիմնական տիպերի տարածման և գյուղատնտեսական ակտիվ օգտագործվող տարածքների սխեմատիկ քարտեզը բերված է ստորև:



Բուսականություն	
	Կիսանապատային բուսականություն
11	Օշինդր-լիվանային, մասնակցությամբ՝ <i>Artemisia fragrans</i> Willd., <i>Koebia prostrata</i> (L.) Schrad., <i>Capparis spinosa</i> Willd., <i>Ceratoides papposa</i> Bosc. et Hoffm., <i>Atriplex spinosa</i> L., <i>Rhamnus pallasii</i> Fisch. et Mey., <i>Tanacetum argyrophyllum</i> (C. Koch) Tzvel., <i>Poa bulbosa</i> L., <i>Bromus</i> , <i>Aegilops</i> , <i>Eremophyton</i> , <i>Alyssum</i> , <i>Aeluropus litoralis</i> (Gouan) Parl.
	Միսապարային բուսականություն
12	Հաթաֆի, մասնակցությամբ՝ <i>Salsola ericoides</i> Bieb., <i>S. dendroideus</i> Pall., <i>S. nitraia</i> Pall., <i>Halocnemum strobilaceum</i> (Pall.) Bieb.
13	Չիպուշի, մասնակցությամբ՝ <i>Salsola zana</i> C. Koch, <i>S. tomentosa</i> (Moq.) Spach, <i>S. germinescens</i> Pall., <i>Gypsophila arenoides</i> Boiss., <i>Halimolobos rardifolium</i> C. Koch, <i>Cephalorhynchus takhtadzhiani</i> (Soss.) Kimp.
14	Պասուշի, մասնակցությամբ՝ <i>Calligonum polyposoides</i> L., <i>Achillea tenuifolia</i> Lam., <i>Salsola tartaruschajanae</i> Iljin, <i>Stipa tenuis plumosa</i> (L.) Munro ex T. Anders., <i>Astragalus paradoxus</i> Bunge.
	Ճանհային բուսականություն
15	Բաշխային և սուրբխառ-բոշխային, մասնակցությամբ՝ <i>Carex vesicaria</i> L., <i>C. acuta</i> L., <i>Hymenopus compressus</i> (L.) Presl. ex Link., <i>Eleocharis quinqueflora</i> (F. X. Hartm.) O. Schwarz, <i>Deschampsia caspica</i> (L.) Beauv., <i>Agrostis gigantea</i> Roth և ուրվներ
16	Նվրմա-նիլիբային, մասնակցությամբ՝ <i>Juncus acutus</i> L., <i>Iris pseudacutis</i> Fomin, <i>Glaux maritima</i> L., <i>Imula sibirica</i> D. C., <i>Microcnemum coralloides</i> Wedg., <i>Thesium Lycianicum</i> Borum, <i>Limn. borsegianii</i> Gahr. et Dotz., <i>Sonchus maritica</i> Nazac. et Haris., <i>Merenderia sobolifera</i> C. A. Mey., <i>Sphaerophyga salina</i> (Pall.) D. C.
	Ջրային բուսականություն
	Ջրային բուսականության խմբավորումներ (Nymphaea alba L., Nymphaeoides peltata (S. G. Gmel.) O. Kuntze, տեսակներ Potamogeton pectinatus L., P. crispus L., P. perfoliatus L., Ceratophyllum demersum L., Myriophyllum spicatum L., Nuphar luteum (L.) Sm., Chara vulgaris L., C. fragilis L.)
	Ֆլորատնտեսական ակտիվ օգտագործվող (վազրանող, բուսական անոթային) տարածքներ

Նկար 9.



Ֆրանկենիա

Ծաղկող կապար

Տեղամասի շրջանում հանդիպող ողնաշարավոր կենդանիները ներկայացված են չորասեր տեսակներով՝ բնափոր կենդանիներով, բաց ու չոր տարածքների թռչուններով: Ցուրտ ամիսներին կիսաանապատները հյուսիսից եկող թռչունների համար ծառայում են որպես ձմեռելու, իսկ գարնանը և աշնանը չվող թռչունների համար՝ սնման ու հանգստի վայր: Շրջանի բնորոշ առանձնահատկություններից է սողունների առատությունը և երկկենցաղների աղքատությունը: Սողուններից քանակապես գերակշռում են մողեսները, օձերը՝ անդրկովկասյան գյուրգան, խայտաբղետ սահնօձը, կարմրափոր սահնօձը: Երկկենցաղներից ամենահաճախը հանդիպում է կանաչ դողոշը:

Բզակտուց- *Recurvirostra avosetta*: Կարգավիճակը՝ Հայաստանում խիստ հազվագյուտ, սակավաթիվ տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 3,1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU D1,

- Լայնակտուց բադ, *Anas clypeata* Linneus: Կարգավիճակը՝ կլոր տարի չվահյուր: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 3,1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝ VU B1ab (iii) +2ab (iii),

- Փոքր ձկնկուլ *Phalacrocorax pygmaeus* Pallas Կարգավիճակը՝ հազվագյուտ, անհետացող տեսակ է: Գրանցված է նախկին ԽՍՀՄ գրքում: Տեսակն ընդգրկված է ԲՊՄՄ Կարմիր ցուցակում (ver 3,1) «Least Concern» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «Խոցելի»՝

VU B1ab (iii) +2a:

-Կարմրաոտ բազե-Falco vespertinus: Կարգավիճակը՝ անհետացող տեսակ է: Տեսակն ընդգրկված է ԲՊՍՍ Կարմիր ցուցակում (ver. 3.1) «Near Threatened» կարգավիճակով: Բնության պահպանության միջազգային միության Կարմիր ցուցակի չափորոշիչներով գնահատվում է որպես «խոցելի»՝ VU B1ab(iii)+2ab(iii); D1,

Բույսերի կարմիր գրքում գրանցված՝

-Հացհամեն գլխիկավոր- Trigonella capitata Boiss: Կատեգորիա՝ EN B 1 ab (i, ii,iii,iv + 2 ab(i, ii,III, IV), վտանգված տեսակ: Հայտնի է միայն մեկ պոպուլյացիա՝ մասնատված արեալով, որը աճում է ինտենսիվ յուրացվող տարածքներում: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500քառ. Կմ պակաս է: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման սպառնալիքի ենթակա տեսակ: Ընդգրկված չէ CITES-ի և Բեռնի կոնվենցիաների հավելվածներում: Այն գտնվում է հայցվող տեղամասից 2,1կմ հեռավորության վրա:

- Միկրոկենեմում մարզանանման- Կատեգորիա. EN B 1 ab(iii,iv) + 2 ab(iii,iv) Վտանգված տեսակ: Հայտնի է ընդամենը մեկ պոպուլյացիա: Տարածման և բնակության շրջանների մակերեսը 500 քառ. կմ-ից պակաս է: Տեսակին սպառնում է տարածման և բնակության շրջանների նվազում նախ և առաջ գյուղատնտեսական գործունեության հետ կապված աճելավայրերի պայմանների փոփոխության հետ: Հայաստանի Կարմիր գրքի առաջին հրատարակության մեջ ընդգրկված էր 1 կարգավիճակով՝ ոչնչացման անմիջական սպառնալիքի ենթակա: Ընդգրկված է Բեռնի կոնվենցիայի Հավելված 2-ում: CITES-ի կոնվենցիայի հավելվածում ընդգրկված չէ,

Ստորև ներկայացվում է կենդանական աշխարհի տիպերի տարածման քարտեզը՝





Նկար 10.

3.7 Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Հանքավայրից մոտ 11,5կմ հեռավորության վրա է գտնվում «Խոր Վիրապ» պետական արգելավայրը, որը ստեղծվել է 2007 թվականին խոնավ տարածքի էկոհամակարգի, դրա բաղադրիչների, բուսական ու կենդանական տեսակների պահպանության, բնականոն զարգացման, վերարտադրության ու կայուն օգտագործման նպատակով:

«Խոր Վիրապ» պետական արգելավայրը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Փոքր Վեդու գյուղական համայնքի վարչական սահմաններում, Արաքս գետի ձախակողմյան մասի Խոր Վիրապ եկեղեցական համալիրի և Հայաստանի հնագույն մայրաքաղաք Արտաշատի աջակողմյան հատվածում գտնվող՝ 50.28 հեկտար խոնավ տարածքի վրա:

Արգելավայրի կազմակերպման հիմնական նպատակը միջազգային նշանակություն ունեցող խոնավ տարածքի էկոհամակարգի, բուսական ու կենդանական աշխարհի՝ հատկապես ջրլող թռչունների ու դրանց ապրելավայրերի, հազվագյուտ բուսատեսակների ու դրանց աճելավայրերի պահպանության, բնականոն զարգացման, վերարտադրության ու կայուն օգտագործման ապահովումն է:

Արգելավայրի հատուկ պահպանության օբյեկտները Մերձարաքսյան խոնավ տարածքի էկոհամակարգի յուրահատուկ կենդանական աշխարհն ու ջրաճահճային բուսականությունն են:

Արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ արգելելու նպատակով 100 մետր լայնությամբ շրջագծով տարածքը սահմանվում է որպես պահպանական գոտի:

«Խոր վիրապ» պետական արգելավայրի ջրաճահճային տարածքներում արձանագրվել են Կենդանիների կարմիր գրքում գրանցված վարդագույն և գանգրափեթուր հավալուսնը, փոքր ձկնկուլը, թշան կարապը, մոխրագույն սագը, կարմիր բաղը, սպիտակաաչք սուզաբաղը, ծովային քարաղբը, սպիտակապոչ եղտյուրիկը, որորակտուց ջրածիծաղը, սոխականման ճոխկահավը:

Հայցվող տարածքից մոտ 21,5կմ հեռավորության վրա գտնվում է «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը: Բնության հատուկ պահպանվող տարածք է, արգելավայրը ստեղծվել է 1959 թ-ին, ՀՍՍՀ ՄՍ հունվարի 29-ի N 20 որոշմամբ՝ 200 հատարածքի վրա: Այն գտնվում է Արարատի մարզի, Արարատյան գոգավորության թեք հարթություններում, Գոռավան գյուղական համայնքի հարավ-արևելյան մասում ծովիմակարդակից 920-980 մ բարձրության վրա:

«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի կանոնադրությունը և տարածքի չափը հաստատվել են ՀՀ կառավարության 2007 թ. հունվարի 25-ի «Խոր Վիրապ» պետական արգելավայր ստեղծելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թ. մայիսի 30-ի N 925-Ն որոշման մեջ լրացումներ ու փոփոխություններ կատարելու մասին N 975-Ն որոշմամբ: Համաձայն այդ որոշման, «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրը, առանց պետական արգելավայրի կարգավիճակի փոփոխության, հանձնվել է ՀՀ բնապահպանության նախարարության «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ ենթակայությանը՝ պահպանության և վերականգնման աշխատանքներն առավել արդյունավետ կազմակերպելու նպատակով: ՀՀ կառավարության 2011 թ. մարտի 31-ի N324-Ն որոշմամբ հաստատվել է «Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի սահմանների նկարագիրը և հատակագծի սխեման: Ներկայումս արգելավայրը զբաղեցնում է 95,99 հա տարածք: Արգելավայրը ձևավորվել է Արարատյան

հարթավայրի Ուրծի լեռնաշղթայի հյուսիսարևմտյան լանջերի ռելիեֆային այլույլալ նստվածքների մի քանի տեղամասերի վրա: Արգելավայրի վրա բացասական ներգործություն ունեցող տնտեսական գործունեությունը սահմանափակելու կամ արգելելու նպատակով 100 մ լայնությամբ շրջագծով տարածքը սահմանվել է որպես պահպանման գոտի:

«Գոռավանի ավազուտներ» պետական արգելավայրի պահպանության օբյեկտն է Անդրկովկասում բնական ջուզգունի գեղաձևկիկ մատիտեղանմանի (*Calligonum polygonoides*) միակ ամբողջական աճման էկոհամակարգը, մնացորդային սորուն ավազներ իր յուրօրինակ ֆլորայի և ֆաունայի էնդեմիկ, հազվագյուտ և անհետացող տեսակներով: Տարածքը պատկանում է Հայաստանի Երևանյան ֆլորիստիկ շրջանին: Արգելավայրի բուսականության հիմնական տիպը ավազային ջուզգունային անապատն է: Սա միակ տեղամասն է Փոքր Կովկասում, որտեղ ներկայացված են ջուզգունի համակեցությունները, և խիստ հազվագյուտ է ողջ Կովկասի համար: Արգելավայրը Երևանի ֆլորիստիկ շրջանի հազվագյուտ տեսակներով ամենահարուստ տարածքն է, որն անոթավոր բույսերի հազվագյուտ և անհետացող տեսակների թվաքանակով Հայաստանում գտնվում է առաջին տեղում:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները, որոնց ցանկը ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N967-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը :

ՀՀ Արարատի մարզում հաշվառված են բնության հետևյալ հուշարձանները.

Հ/Հ	Անվանումը	Տեղադիր քը
1	2	3
1.	«Անձավիկ» քարանձավ	Վեդի քաղաքից մոտ 20 կմ հս-արլ, Ուխտուակունքգետի աջ ափին, Դարբանդ գետի հետ միախառնման տեղից 08 կմ հոսանքով վեր, 40 մ գետի հունից բարձր, ծ.մ-ից 2100 մ բարձրության վրա
2.	«Դաշտաքար» քարանձավ	Դաշտաքար գյուղից 0,2 կմ հվ, Անահավատքար լեռան հս լանջին, հիմքից 400 մ բարձրության վրա

3.	«Մեծ հոր» համակարգ անձավային համակարգ»	Շաղափ գյուղից 3 կմ հս-արլ, ծ.մ-ից 2200 մ բարձրության վրա
4.	«Անանուն» շերտավոր նստվածքներ	Տիգրանաշեն-Պարույր Սևակ գյուղերի ճանապարհի 17-րդ կմ-ի վրա
5.	«Անանուն» անտիկլինալ ծալք	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
6.	«Անանուն» ծալքավոր ստրուկտուրա	Երևան-Մեղրի խճուղու 81-րդ կմ (Տիգրանաշեն-Պարույր Սևակ հատվածի 15-րդ կմ)
7.	«Անանուն» ծալքագոյացման մերկացում	Ուրցաձոր գյուղից 4,5 կմ դեպի հս, Վեդի գետի աջափին
8.	«Հորթունի» բրածո ֆլորա	Զանգակատուն գյուղից 8 կմ հս-արլ
9.	«Զերմանիսի» բրածո ֆլորա	Ուրցաձոր գյուղից մոտ 20 կմ գետի հոսանքով վեր, նախկին Զերմանիս գյուղատեղիի մոտակայքում
10.	«Վեդի գետի ավազանի» բրածո ֆաունա	Վեդի գետի ավազան, Ուրցաձոր գյուղից 15 կմ հս-արլ
11.	«Աղակալած ճահճուտ»	քաղ. Արարատ, հանքային աղբյուրների մոտ, ծ.մ-ից մոտ 850 մ բարձրության

Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման նպատակով հայցվող տարածքներին ամենամոտ գտնվող բնության հուշարձանը «Աղակալած ճահճուտ» կենսաբանական հուշարձանն է, որը գտնվում է հայցվող տարածքից մոտ 24,5կմ հեռավորության վրա:

4. ՄՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մարզի ընդհանուր տարածքը՝ 2096քկմ է, կազմում է Հայաստանի Հանրապետության տարածքի 7%-ը:

Մարզն ունի շուրջ 258.9 հազար բնակչություն, որից 73.0 հազ. քաղաքաբնակներ են (28%), 185.9 հազարը՝ գյուղաբնակ (71%): Մարզի ամբողջ բնակչությունը 2011-2015թթ ընթացքում նվազել է շուրջ 0,7 %-ով, ՀՀ-ում նույնպես գրանցվել է բնակչության թվի նվազում 0,8%, իսկ Արմավիրի մարզում այն աճել է 0,2%-ով: Արարատի մարզի բնակչության խտությունը՝ 141 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա, Արմավիրի մարզի բնակչության խտությունը կազմում է 215 մարդ 1 քկմ-ի վրա, այն դեպքում երբ ՀՀ-ում միջին խտությունը կազմում է 101 մարդ: ՀՀ-ում ամենաբարձր բնակչության խտությունը գրանցված է մայրաքաղաքում՝ 4815 մարդ 1 քկմ-ի վրա: Արարատի մարզը այս ցուցանիշով մարզերի մեջ գրավում է 2-րդ տեղը Արմավիրից հետո:

Մարզի բնակչությունը գրեթե հավասարաչափ տեղաբաշխված է 3 տարածաշրջաններում: 01.01.2018թ. դրությամբ մարզի մշտական բնակչությունը ըստ տարածաշրջանների հետևյալն է՝ ամբողջ ազգաբնակչությունը կազմում է 258.9 հազար մարդ, որից Արտաշատի տարածաշրջանում 90.4 հազար մարդ, Արարատի տարածաշրջանում 89.5 հազար մարդ, Մասիսի տարածաշրջանում՝ 79 հազար մարդ:

Արարատի մարզում բնակչության տեղաբաշխումը հավասարաչափ չէ, ամենամեծ կուտակումը մարզում Արտաշատի և Մասիսի տարածաշրջաններում են՝ հիմնականում հարթավայրային մասում դեպի մայրաքաղաքի ուղղությամբ, դեպի նախալեռնային և լեռնային բնակավայրեր՝ բնակչության խտությունը կտրուկ նվազում է:


Մարզը բնակչությամբ գրեթե միատարր է, հիմնականում բնակեցված է հայերով՝ 93%, ազգային փոքրամասնություններից մարզում ապրում են եզդիներ 2.5%, ասորիներ 0,09%, քրդեր 0.05%, ռուսներ 0.4%:

ՀՀ Արարատի մարզի տնտեսապես ակտիվ բնակչության թիվը 128.1 հազար մարդ է, որը կազմում է մարզի ընդհանուր բնակչության 49.5%-ը: Տնտեսապես ակտիվ բնակչության կշիռը Արարատում գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը և Արմավիրի մարզի ցուցանիշը:

Արարատի մարզում տնտեսական ակտիվության ցուցանիշը կազմել է 69.3%, որը

հանրապետական միջին ցուցանիշից բարձր է 6.8%-ով: Տարբերություններ կան տղամարդկանց (71.7%) և կանանց (65.2%), ինչպես նաև քաղաքային (44%) և գյուղական (82%) տարածքների միջև: Համեմատած Արմավիրի մարզի հետ տնտեսական ակտիվության մակարդակը բարձր 1.7%-ով:


Արդյունաբերական արտադրանքի ծավալի ըստ արտադրության բաժինների



Աղբյուրը՝ ԱՎՄ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. էջ 28, վերլուծություն (http://armstat.am/file/article/marz_2016_10.pdf)

Մարզի արդյունաբերական արտադրության 92.3%-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, որը հիմնականում գյուղմթերքի վերամշակությունն է և որը մեծապես պայմանավորված է մարզում գյուղատնտեսական բարձր արտադրողականությամբ:

Գծանկար 17. 2011-2015 ուս.տարում միջինմասնագիտական ուսումնական հաստատությունների թիվը



Աղբյուրը՝ ԱՎՄ, ՀՀ մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016թ. http://armstat.am/file/article/marz_2016_19.pdf

ՀՀ Արարատի մարզում առկա են 7087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 11.6%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 274, իսկ Արմավիրի մարզում առկա են 9087 գործող (ակտիվ) ձեռնարկություններ, որը կազմում է հանրապետության մարզային ցուցանիշի 14.9%-ը, 10000 բնակչի հաշվով ձեռնարկությունների թիվը կազմում է 341: Ինչպես և ՀՀ բոլոր մարզերում այստեղ նույնպես ձեռնարկությունների գերակշռող մասը ունի մի քանի աշխատող և կարող են համարվել ՓՄՁ ձեռնարկություններ:

Մարզի տնտեսության հիմնական ցուցանիշներն ըստ ՀՀ տնտեսության ճյուղերի հետևյալն են՝ արդյունաբերություն՝ 12.9 %, գյուղատնտեսություն՝ 14.1 %, շինարարություն՝ 2.1 %, մանրածախ առևտուր՝ 2.7 %, ծառայություններ՝ 1.6 %:

Մարզը Հայաստանի արդյունաբերական և գյուղատնտեսական առաջատարներից է՝ այստեղ մեկ շնչի հաշվով արտադրվող արդյունաբերական արտադրանքը ավել է քան ՀՀ միջին ցուցանիշը շուրջ 1.5 անգամ, իսկ գյուղատնտեսական արտադրանքը շուրջ 1.6 անգամ, այլ ոլորտներում մարզը զգալիորեն զիջում է ՀՀ միջին ցուցանիշներին:

Արդյունաբերություն Արարատի մարզը Հայաստանի Հանրապետության զարգացած արդյունաբերական մարզերից է: ՀՀ արդյունաբերության ծավալի 12.9 %-ը կազմում է Արարատի մարզի արդյունաբերական ձեռնարկությունների արտադրանքը: Մարզում 2015թ գործել են թվով 99 արդյունաբերական ձեռնարկություններ՝ 2011թ այդ թիվը կազմել է 77: Արարատի մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն գինու- կոնյակի 10-ից ավելի խոշոր գործարանները, “Արարատ – ցեմենտ”, “Ոսկու կորզման ֆաբրիկան”, Արտաշատի, Արարատի պահածոների, “Մասիս տոբակո”, “Ինտերնեշնլ Մասիս տոբակո” գործարանները:

Արդյունաբերության առաջատար ուղղությունները սննդամթերքի, ներառյալ՝ խմիչքների, արտադրություններն են և այլ ոչ մետաղական հանքային արտադրատեսակների արտադրությունը:

Մարզի բազմաճյուղ արդյունաբերության հիմնական և գլխավոր ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ 3 ճյուղերը.

- 1) սննդամթերքի և ըմպելիքի արտադրություն (մրգերի, բանջարեղենի վերամշակում և պահածոյացում, թորած ալկոհոլային խմիչքների արտադրություն)
- 2) ծխախոտի արտադրություն (ծխախոտի խմորում՝ ֆերմենտացիա)
- 3) ոչ մետաղական հանքային արտադրանքի արտադրություն (ցեմենտի, կրի, ազրոցեմենտային իրերի արտադրություն, քարի կտրում և վերամշակում):

2011-2015թթ. արդյունաբերական արտադրանքի ծավալը Արարատի մարզում աճել է մոտ երկու անգամ, Արմավիրի մարզում 1.3 անգամ, իսկ ՀՀ-ում 1.3 անգամ:

2014-2015թթ. Արարատի մարզում արդյունաբերական ձեռնարկությունների, փոքր ձեռնատրիական սուբյեկտների կողմից թողարկված արտադրանքի ծավալի աճը կազմել է 19 %:

2011-2015թթ. արդյունաբերական պատրաստի արտադրանքի իրացման ծավալները ՀՀ-ում աճել է 1.38 անգամ Արարատի մարզում՝ 2.1:

Մարզի արդյունաբերական արտադրության 92.3%-ը բաժին է ընկել մշակող արդյունաբերությանը, որը հիմնականում գյուղմթերքի վերամշակությունն է և որը մեծապես պայմանավորված է մարզում գյուղատնտեսական բարձր արտադրողականությամբ:

Գյուղատնտեսություն.

Արարատի մարզի տնտեսության հիմքը գյուղատնտեսությունն է՝ այն հիմնականում մասնագիտացած է պտղաբուծության, խաղողագործության, բանջարաբուծության մեջ: Արարատի մարզի հարթավայրային և նախալեռնային գոտիները նպաստավոր են բուսաբուծության, իսկ լեռնային գոտիները՝ անասնապահության զարգացման համար: Մարզի ազգաբնակչության 71.5% բնակվում է գյուղական վայրերում, որոնց կենսունակությունը պայմանավորված է գյուղատնտեսական գործունեությամբ:

Մարզի գյուղատնտեսական հողատեսքերը՝ ներառյալ տնամերձերը՝ 164 696 հա, կազմում են մարզի ընդհանուր տարածքի 78.8%-ը: Գյուղատնտեսական հողատեսքերի 87.6%-ը կազմում են մշակովի տարածքները՝ ներառյալ տնամերձերը 42 260 հա:

Մարզի ակտիվ գյուղատնտեսական ուղղվածության ձեռնարկությունները 31 են, որոնցից 6-ը զբաղվում են կաթի վերամշակմամբ, 2-ը՝ մսի, մնացած 23-ը՝ բուսաբուծական մթերքների վերամշակմամբ: Վերամշակող կազմակերպությունների կողմից 2015թ գնված գյուղմթերքի ծավալները 2011թ-ի համեմատությամբ Արարատի մարզում ավելացել են 24.4%-ով, հանրապետությունում՝ 44.6%-ով:

Արտահանում: Մարզը արտահանման տեսանկյունից ունի լավ ցուցանիշներ: 2015 թ. ցուցանիշներով մարզի արտահանումը կազմում է ՀՀ արտահանման 9.1%, կամ մեկ շնչի հաշվով 6% գերազանցում է ՀՀ մեկ շնչի հաշվով արտահանումը:

ՀՀ Արարատի մարզի արտահանման ծավալները, հաշվարկված ՀՀ դրամով, 2011-2015թթ. տարիներին կտրուկ բարձրացել է՝ շուրջ 5.4 անգամ, Արմավիրի մարզինը՝ 11.7 անգամ, հանրապետությանը՝ 1.42:

Մարզից արտահանվում է հիմնականում գյուղմթերքի վերամշակումից ստացված արտադրանք՝ գինի, կոնյակ, միրգ, բանջարեղեն, պահածոյացված գյուղմթերք՝ և հանրապետությունու և հանրապետությունից դուրս մեծ պահանջարկ ունեն Արարատի մարզի քաղցրահամ մրգերը, բարջարեղենը, մուրաբաները, բնական հյութերը, չրերը:

Մարզի արտահանման մեջ մեծ ծավալներ են կազմում բնական հանքաքարերի արտահանումը:

2011-2015թթ. Արարատի մարզի ծառայությունների ծավալի տեսակարար կշիռը ՀՀ-ի ընդհանուրի մեջ նվազել է 5.4%-ից դարձել է 1,6%, Արմավիրի մարզի ծառայությունների ծավալը նույնպես նվազել է 2,3% -ից դարձել 1,6%

Առևտուր: 2011-2015թթ. Արարատի մարզի առևտրի շրջանառության տեսակարար կշիռը ՀՀ-ում աճել է 2,2%-ից դարձել է 2,8%, Արմավիրի մարզի առևտրի շրջանառությունը նույնպես աճել է 2,3% դարձել 4,1%:

- Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Ավազի արդյունահանման համար ներկայումս հատկացված տեղամասը վարչական տեսակետից գտնվում է Բուրաստան համայնքում: Համայնքի հողային ֆոնդի բաշխվածությունը ներկայացված է հետևյալ կերպ.

Նպատակային նշանակությունը	Մակերեսը, հա
1	2
Գյուղատնտեսական (վարելահող, բազմամյա տնկարկներ)	247.39
Բնակավայրերի	17.55
Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների	6.97
Էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների	0.03
Հատուկ պահպանվող տարածքների	2.29
Հատուկ նշանակության	3.26
Ջրային հողեր	57.67

Համայնքի բնակչությունը կազմում է 793 մարդ, որից 46% տղամարդիկ են, իսկ կանայք՝ 54%: Մինչ աշխատունակ տարիքի բնակչությունը կազմում է 32%, աշխատունակ տարիքի

ներկայացուցիչները՝ 56%, հետաշխատունակները՝ 12%: Գյուղն ունի 221 տնտեսություն: Ունի դպրոց, կապի հանգույց, բուժկետ, մանկապարտեզ, մշակույթի տուն:

Համայնքի տնտեսության մասնագիտացման ճյուղը գյուղատնտեսությունն է, համախառն բերքի մեծ մասը տալիս է բուսաբուծությունը: Գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են շուրջ 377հա: Գյուղատնտեսական հողահանդակները ռոտովում են, դրանք զբաղեցնում են ողջ մակերեսի 50%: Համայնքի հողերը օգտագործվում են գլխավորապես վարելահողեր զբաղեցնելով 234հա: Պտղատու և խաղողի այգիները փոքր տարածք են զբաղեցնում՝ 3.5 հա: Զբաղվում են են այգեգործությամբ, խաղողագործությամբ, դաշտավարությամբ, բանջարաբուծությամբ: Մշակում են ջերմասեր բանջարաբուստանային կուլտուրաներ՝ լոլիկ, տաքդեղ, սմբուկ, ձմերուկ, սեխ, ինչպես նաև հացահատիկ: Զբաղվում են նաև կաթնամսատու անասնապահությամբ:

Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի շահագործման աշխատանքների նախաձեռնությունը և հաշվետվությունը ներկայացվել են համայնքի բնակիչներին: Հարցը քննարկվել է համայնքում (նիստի արձանագրությունը ներկայացվում է): Համայնքը հավանություն է տվել համայնքի տարածքում ավազի արդյունահանման աշխատանքներին:

4.1. Պատմության, մշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 2002 թվականի հունվարի 22-ի թիվ 65-Ն որոշմամբ հաստատվել է ՀՀ Արարատի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ցանկը:

Բուրաստան բնակավայրի տարածքում են գտնվում՝

Հուշարձանը	Ժամանակը	Գտնվելու վայրը
1. Գերեզմանոց	18-20դդ.	հարավային եզրին
2. Եկեղեցի Ս. Աստվածածին	19դ.	հարավային մասում
3. Եկեղեցի Ս. Հակոբ	1642թ.	հարավ-արևմտյան եզրին
4. Հուշարձան Երկրորդ Աշխարհամարտում զոհվածներին	1971թ.	գյուղի մեջ

Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի հայցվող տարածքի և Բուրաստան գյուղի պատմության, մշակույթի հուշարձանների միջև հեռավորությունը

զմում է մոտ 5,6կմ:

5. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ

ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքերի իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա դրսևորվող տեխնածին ճնշումների նկարագիրը ներկայացված է ստորև:

Մթնոլորտային օդ.

Բացահանքում աշխատող ավտոտրանսպորտը հանդիսանում է վնասակար գազերի և փոշու արտանետման աղբյուր, փոշեգոյացում տեղի է ունենալու նաև բացահանքի սահմաններում: Փոշեգոյացումը կապված է հիմնականում ավտոտրանսպորտի աշխատանքի հետ, հանույթաբարձման աշխատանքների ժամանակ փոշեգոյացում տեղի չի ունենում, քանի որ ավազի զանգվածը գտնվում է խոնավ վիճակում: Մեքենաների և սարքավորումների աշխատանքի արդյունքում օդ են արտանետվում ածխածնի օքսիդ, ազոտի երկօքսիդ, մուր և ծծմբային գազ:

Համաձայն շրջակա միջավայրի պահպանությանը վերաբերվող նախագծման նորմերի (СНИП 11-01-95, СНИП 1.02.01-85)՝ սահմանային թույլատրելի խտությունները ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի, մրի և ծծմբային գազի համար համար համապատասխանաբար կազմում են $0,0005\text{գ/մ}^3$; $0,000085\text{գ/մ}^3$; $0,00015\text{գ/մ}^3$; $0,0005\text{գ/մ}^3$:

Փոշու և վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցում նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Ջրային ավազան. Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Բնական ներծծման հաշվին բացահանքի տարածքում հավաքվող ջրերը հեռացվելու են նախնական նստեցումից, պարզեցումից հետո:

Արտադրական տարածքի կենցաղային կեղտաջրերը կուտակվելու են բետոնապատ անթափանց հորում, որտեղից պարբերաբար հեռացվելու են հատուկ ծառայության ուժերով:

Փոշենստեցման նպատակով բացահանքի ջրցանում չի կատարվելու, քանի որ օգտակար հանածոյի զանգվածը գտնվում է խոնավ վիճակում:

Արաքս գետը հոսում է Գետամեջի հանքավայրի հայցվող տարածքից մոտ 90մ, Սև ջուր վտակից՝ մոտ 170մ հեռավորությունների վրա, ինչը բացառում է աշխատաքների արդյունքում որևէ ազդեցությունը գետերի ափերի և հատակի վրա:

Հետևաբար, ջրային ռեսուրսների վրա ազդեցություն չի լինելու:

Հողային ծածկույթ.

Խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնում նախատեսվում է իրականացնել հանքի փակման ժամանակ, երբ կվերականգնվեն աշխատանքային հրապարակը և մոտեցնող ճանապարհները: Բացահանքի ռեկուլտիվացիա չի նախատեսվում, քանի որ տեղամասն իրենից ներկայացնում է գարնանային վարարումներով ծածկվող տարածք, որտեղ յուրաքանչյուր տարի կատարվում է ավազի նոր պաշարների կուտակում:

Հանքավայրի տարածքում հողաբուսական շերտ չկա, քանի որ այն պատկանում են գետաողողատային տիպին և բնութագրվում են տարեկան ցիկլում վերականգնվող պաշարներով:

Բուսական և կենդանական աշխարհ.

Ավազի արդյունահանման աշխատանքների բացասական ազդեցությունը հանքավայրի տարածաշրջանի բուսական և կենդանական աշխարհի վրա աննշան է, քանի որ ընդհանուր առմամբ տարածաշրջանը հանդիսանում է տնտեսա-պես յուրացված գոտի:

Օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով հայցվող տարածքում մշտական բուսածածկ չի ձևավորվում: Դա պայմանավորված է այն փաստով, որ Արաքսի վարարման ժամանակ տարածքը ամբողջությամբ ծածկվում է ջրով, տեղի է ունենում ավազի նստվածքագոյացում:

Դիտարկված բույսերը հատկանշական են կիսաանապատային-տափաստանային լանդշաֆտներին, լայն տարածված են հանրապետության Արարատի և Արմավիրի մարզում: ՀՀ Բույսերի կարմիր գրքում գրանցված բուսատեսակներ հանքավայրի տարածքում չեն արձանագրվել:

Կենդանական աշխարհի դիտարկված տեսակները նույնպես ունեն լայն տարածքում ՀՀ տարածքում, գրանցված չեն ՀՀ կենդանիների կարմիր գրքում:

Որպես հնարավոր ազդեցություն դիտարկվում են բուսածածկի խախտում

բացահանքի և ենթակառուցվածքաների սահմաններում, կենդանիների միգրացիա հանքավայրի տարածքից, կապված գործարկվող սարքավորումների աղմուկի, թրթռումների (հանգստացնող գործոններ) հետ:

Բնության հատուկ պահպանվող տարածքներ

Գետամեջի հանքավայրի սահմաններում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Հանքավայրից մոտ 11,5կմ հեռավորության վրա է գտնվում «Խոր Վիրապ» պետական արգելավայրը, մոտ 21,5կմ հեռավորության վրա՝ «Գոռավանի ավազուտներ»պետական արգելավայրը:

Ավազակոպճային խառնուրդի արդյունահանման նպատակով հայցվող տարածքներին ամենամոտ բնության հուշարձանը «Աղակալած ճահճուտ» կենսաբանական հուշարձանն է, որը գտնվում է հայցվող տարածքից մոտ 24,5կմ հեռավորության վրա:

Հետևաբար, որևէ ազդեցություն բնության հատուկ պահպանվող տարածքների վրա չի դրսևորվելու:

Պատմամշակութային հուշարձաններ

Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրի հայցվող տարածքի և Բուրաստան գյուղի պատմության, մշակույթի հուշարձանների միջև հեռավորությունը կազմում է մոտ 5,6կմ, ինչը բացառում է որևէ ազդեցություն պատմամշակութային ժառանգության օբյեկտների վրա:

Թափոնների առաջացում

Գետամեջի ԱԿԽ հանքավայրի շահագործման ընթացքում մակաբացման ապարներով ներկայացված ընդերքօգտագործման թափոններ չեն առաջանալու, քանի որ ավազի օգտակար կուտակը ծածկող առաջացումներ հանքավայրի տարածքում չկան: Ջրհեռացման առվի հատակում նստեցման հաշվին առաջացող առաջացող օրգանական նյութով հարուստ տիղմը օգտագործվելու է արտադրական հրապարակի կանաչապատված տարածքներում՝ որպես պարարտանյութ:

Ավազի արդյունահանման տեխնոլոգիական գործընթացի հետ

կապված ձևավորվում են մի շարք արտադրական թափոններ, այդ թվում.

- Իրենց սպառողական հատկությունները կորցրած շարժիչային յուղերի մնացորդներ 0,31տ/տ

վտանգավորության դասը III

դասիչ՝ 5410030102033

բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ, բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում: Թափոններն առաջանում են ավտոտրանսպորտային և տեխնիկական միջոցների շարժիչների շահագործման արդյունքում:

- Իրենց սպառողական հատկությունները կորցրած դիզելային յուղերի մնացորդների թափոններ 0,1տ/տ

վտանգավորության դասը III,

դասիչ՝ 5410030302033

բաղադրությունը՝ նավթ, պարաֆիններ, սինթետիկ միացություններ, բնութագիրը՝ հրդեհավտանգ է, առաջացնում են հողի և ջրի աղտոտում:

- Բանեցված դողածածկաններ 0,05տ/տ

Թափոնի դասը՝ 57500202 13 00 4

Այն հանդիսանում է վտանգավորության 4-րդ դասի թափոն:

Թափոնները առաջանում են մեխանիզմների շահագործման արդյունքում:

Օգտագործված յուղերը և քսայուղերը հավաքում են, այդ նպատակով առանձնացված տարածքում, առանձին մետաղական տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ հնարավորություն ստեղծվելու դեպքում՝ երկրորդական վերամշակման հանձնելու նպատակով: Հնամաշ մեխանիզմների դետալներն ու մասերը կուտակվում են առանձին տեղում և հանձնվում են, որպես մետաղի ջարդոն:

Հանքի տարածքում առաջանալու է Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ /բացառությամբ խոշոր եզրաչափերի/ տարեկան մոտ 1,08տ ծավալով: Ծածկագիրը՝ 91200400 01 00 4: Կազմը՝ ապակի, փայտ, թուղթ, կտոր, սննդի մնացորդներ, պոլիմերներ: Հրդեհապայթյունավտանգ չէ, կոռոզիոն ակտիվության տեսակետից պասիվ է,

ռեակցիոնունակ չէ: Թափոնը փոխադրվելու է մոտակա աղբավայր, աղբահանության նպատակով կնքվելու է համապատասխան պայմանագիր, վճարումը կատարվելու է ըստ պայմանագրի և

«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան:

Աղմուկ, թրթռումներ

Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն : Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80դԲԱ:

Աղմուկի ազդեցությունը ազդակիր բնակավայրում գնահատելու նպատակով կատարվել են հետևյալ հաշվարկները:

Հայցվող տարածքում գումարային հաշվարկային ձայնային բնութագիրը՝ LAէկվ ընդունված է 70դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

$LA_{տար} = La_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta La_{էկր} - \Delta LA_{կանաչ}$ բանաձևով, որտեղ՝ LAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=65դԲԱ,

$\Delta LA_{հեռ}$ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված, $\Delta LA_{հեռ}$ կազմում է 20դԲԱ,

$\Delta LA_{էկր}$ - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով (բացահանքի տարածք), $\Delta LA_{էկր} = 10$ դԲԱ,

$\Delta LA_{կանաչ}$ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, $\Delta LA_{կանաչ} = 10$ դԲԱ:

Աղմուկի մակարդակը Բուրաստան գյուղի մոտ կկազմի՝

$La_{տար} = La_{էկվ} - \Delta LA_{հեռ} - \Delta La_{էկր} - \Delta LA_{կանաչ} = 70 - 20 - 10 - 10 = 30$ դԲԱ (նորման 45դԲԱ):

Հանքահանման տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների

աշխատանքի հետ: Թողթումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:

Սանիտարական պահպանության գոտի

Համաձայն 245-71 սանիտարական նորմերի՝ առանց պայթեցման աշխատանքների շինարարական նյութերի արդյունահանման ձեռնարկությունների համար սահմանված է 50մ սանիտարական-պաշտպանիչ գոտի:

Հանքավայրը գտնվում է հարակից գյուղերի բնակելի գոտիներից նվազագույնը 2,7կմ հեռավորությունների վրա, ինչը գերազանցում է սահմանված սանիտարական գոտու սահմանված չափերը 48 անգամ:

6. ՀԱԿԱՎԹԱՐԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Բացահանքում բոլոր աշխատանքներն իրականացվելու են հաշվի առնելով «Բաց եղանակով օգտակար հանածոների հանքավայրի մշակման անվտանգության միասնական կանոններ»-ի պահանջները:

Վթարներից խուսափելու համար անհրաժեշտ հիմնական պայմանները թվարկված են ստորև՝

- մուտքը բացահանքի տարածք իրականացվում է ձեռնարկության ղեկավարության կողմից տրված անցագրերով;
- բացահանքի շինությունների վրա, մարդկանց կուտակման վայրերում և շարժման երթուղիներում պետք է փակցվեն տեխնիկական անվտանգությանը վերաբերող ցուցադրական միջոցներ: Դրանք են համապատասխան ցուցանակները, նշանները, պլակատները, թույլատրող և արգելող նախազգուշական ազդագրերը, որոնց նշանակությանը պետք է ծանոթ լինեն բացահանքի բոլոր աշխատողները;
- լեռնատրանսպորտային սարքավորումները տեղադրվում են մշակված տարածքների և նստվածքների վերին եզրից ավելի քան 3-4մ հեռավորության վրա, փլուզման գոտու սահմաններից դուրս և որմնակապվում;
- հրդեհամարման համար ջրի ռեզերվուարում պահվում է 100մ³ ծավալով մշտական ջրի պաշար ;
- փոխաբեռնման կետերը, որոնցում որպես միջանկյալ օղակ օգտագործվում են էքսկավատորներ, պետք է բավարարեն հետևյալ պահանջները՝
 - 1) հանքազանգվածաշերտի բարձրությունը պետք է սահմանվի՝ ելնելով հանքազանգվածի ֆիզիկամեխանիկական հատկություններից, բայց ոչ ավելի էքսկավատորի շերտիման բարձրությունից.
 - 2) լցակույտի յուրաքանչյուր սեկտորի լցման ժամանակ հանքազանգվածաշերտի թեքման անկյունը պետք է համապատասխանի պահեստավորվող հանքազանգվածի բնական թեքման անկյանը;
- սեկտորում աշխատանքները պետք է կատարվեն համաձայն բացահանքի ղեկավարության կողմից հաստատված աշխատանքների կատարման

տեղեկաթերթիկի, իսկ տեղանքը նախատեսվում է կահավորել հատուկ նշաններով և ցուցատախտակներով;

- փոխաբեռնման կետի բեռնաթափման հրապարակների չափերը պետք է ապահովեն արտադրությամբ զբաղվող բոլոր մեքենաների և մեխանիզմների բնականոն և անվտանգ աշխատանքը՝ դրանց տեղաշարժման և ուղեւորանցման ժամանակ: Բեռնաթափման աշխատանքների կատարման ճակատի երկարությունը և բեռնաթափման հրապարակի լայնությունը պետք է որոշվեն՝ ելնելով տրանսպորտային միջոցների (ավտոմեքենաների, բուլդոզերների և այլն) եզրաչափերից, տեղաշարժման աշխատանքների կատարման ընդունված սխեմայից և շրջադարձի շառավղից՝ հաշվի առնելով բեռնաթափմանը կանգնած և սպասող տրանսպորտային միջոցի անհրաժեշտ անվտանգ հեռավորությունը, որը պետք է լինի 5 մ-ից ոչ պակաս;
- բեռնաթափման հրապարակում աշխատող ինքնաթափ մեքենայի և բուլդոզերների աշխատանքային գոտում կողմնակի մարդկանց գտնվելը կամ որևէ այլ աշխատանք կատարելն արգելվում է: Նրանք պետք է գտնվեն աշխատող մեխանիզմից 5 մ-ից ոչ պակաս հեռավորության վրա:

7. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:

- Թափոնների անձնագրերի կազմում և ներկայացում ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն :

- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա:

- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում :-

- Կեղտաջրերի հավաքում բետոնապատ հորատիպ զուգարանում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով: Աշխատանքների ավարտից հետո դատարկված փոսը կլցվի քարերով, կծածկվի հողի շերտով :

- Արտադրական տարածքի կանաչապատում, որի ընթացքում օգտագործվելու է ջրհեռացման առվի հատակում կուտակված և ավազի լվացումից առաջացած օրգանական հումքով հարուստ տիղմը:

- Խախտված տարածքների (արտահրապարակ, ճանապարհներ) ռեկուլտիվացիա: Նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 18,08,2021թ 1352-Ն որոշման պահանջներով, ինչպես նաև իրականացնել կենսաբանական ռեկուլտիվացիա:

- Հանքավայրի տարածքից դուրս եկող տեխնիկային հսկում՝ գերբեռնվածությունից խուսափելու նպատակով՝ կշեռքների տեղադրման եղանակով:

- Անիվները հանքավայրի տարածքից դուրս գալուց սահմանված կարգով լվանալ:

- Փոշենաստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակ, մուտքային ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին: Տեխնիկական, աշխատակիցների կենցաղային կարիքների և խմելու ջուրը նախատեսվում է բերել մոտակա Արտաշատ համայնքից պայմանագրային հիմունքներով, ընդերքօգտագործման իրավունքի ստացումից հետո :
- Նախատեսվում է առաջնորդվել ՀՀ կառավարության 10.01.2008թ 18-Ն և 20.01.2015թ 64-Ն որոշման պահանջներով:
- Աշխատանքներն իրականացնելիս նախատեսվում է բացառել մոտակա ջրային ռեսուրսների հատակների, ափերի, հոսքերի կամ հատկությունների փոփոխությունը:
 - Նախատեսվում են աշխատողների սանիտարակենցաղային հարմարություններ՝ հանդերձարան, ցնցուղարան, զուգարան և հանգստի սենյակ՝ համաձայն ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանի:
- Նախատեսվում է առաջնորդվել Ջրային օրենսգրքի դրույթներով՝ ջրօգտագործման թույլտվությունն իրավունք չի վերապահում փոփոխել, ձևափոխել կամ այլ կերպ օգտագործել ջրային ռեսուրսի հունը կամ ափերը, եթե դա չի սահմանվում որպես ջրօգտագործման թույլտվության առանձին պայման: Ջրային ռեսուրսի հունը կամ ափերը փոփոխելու, ձևափոխելու կամ այլ կերպ օգտագործելու իրավունքը պետք է համապատասխանի օրենքով սահմանված պահանջներին,
- Նախատեսվում են կենսաբազմազանության պահպանությանն ուղղված միջոցառումներ, ներառյալ ընդերքօգտագործման հարակից տարածքներում:

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունների համար առաջարկվող մեղմացնող միջոցառումները ներառում են.

 - Աշխատանքների ընթացքում բացառել տեխնիկա-տրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից և արտադրական տեղամասերից դուրս:
 - Տեխնիկա-տրանսպորտային միջոցները վարել բացառապես գոյություն ունեցող ճանապարհներով, անհրաժեշտության դեպքում բարելավել այն:
 - Հանքանյութի տեղափոխման ժամանակ, բեռնատարների թափքը ծածկել:
 - Տեխնիկական միջոցների վառելիքաքսուքային (յուղ, դիզել, բենզին և այլն) նյութերի

վթարային արտահոսքը բացառելու համար տեխնիկա-տրանսպորտային միջոցները շահագործել միայն սարքին վիճակում:

- Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների հայտնաբերման դեպքում առանձնացնել տվյալ պահպանվող գոտին:

- Կենդանական աշխարհի ներկայացուցիչների բնադրման և թխման ժամանակամիջոցում հնարավորինս նվազեցնել տեխնիկական միջոցների կիրառմամբ աշխատանքները:

- Ամբողջ շինարարական աշխատանքների ընթացքում հնարավորինս նվազեցնել աղմուկն ու լուսավորությունը:

- Անհրաժեշտության դեպքում մշակել գործողությունների պլան հիմնվելով ՀՀ կառավարության "ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին" թիվ 781-Ն որաշման դրույթների վրա:

Բնապահպանական միջոցառումների իրականացման համար նախատեսվում են 300 000 ՀՀ դրամ:

Հարթեցումը կկատարվի բացահանքի միայն մոտեցող ավտոճանապարհի, արդյունաբերական հրապարակի և աշխատանքային հրապարակի խախտված մակերեսները: Հարթեցումը կկատարվի բուլդոզերի օգնությամբ: Մշակված տարածության լեռնատեխնիկական վերականգնման համար ծախսերի խոշորացված հաշվարկները բերված են աղյուսակներում:

Նյութերի ծախսի հաշվարկը

Աշխատանքի անվանումը, օգտագործվող սարքավորումը	Ծախսվող նյութի անվանումը	Նյութերի ծախսը ՐԷ,Լ	Նյութերի արժեքները	
			միավորի արժեքը, դրամ	ընդհանուր արժեքը, հազ. դրամ
Հանածոյի տեղափոխում բուլդոզերով, հարթեցումը	դիզ. վառելիք	500	450	225,0
	դիզ. յուղ	15	800	12,0
	այլ քսուքներ	12	800	9,6
Ընդամենը				246,6

Աշխատավարձի ֆոնդի հաշվարկը

Պաշտոնը կամ մասնագիտությունը	Աշխատանքի տևողություն, ամիս	Մարդկանց քանակը	Ամսական աշխատավարձը, հազ. դրամ	Աշխատավարձի ֆոնդը, հազ. դրամ
Տեղամասի պետ	0.3	1	150.0	45.0
Բուլդոզերավար	0.2	1	150.0	45.0
Ընդամենը		2		90.0

Ամորտիզացիոն ծախսերի հաշվարկը

Մեխանիզմի անվանումը	Քանակը	Մեխանիզմի հաշվեկշռային արժեքը, հազ. դրամ	Ամորտիզացիայի %-ը	Ամորտիզացիայի տարեկան գումարը,	Ամորտիզացիայի Ամսական գումարը, հազ.	Ամորտիզացիայի ընդամենը գումարը,
Բուլդոզեր	1	3600.0	10	360.0	40.0	12.0
Ընդամենը						12.0

Շահագործման ծախսերի նախահաշիվ

Ծախսերի հոդվածները	նորմը %	Չափման միավորը	Գումարը հազ. դրա
Նյութեր	-	հազ. դրամ	246,
Աշխատավարձ	-	հազ. դրամ	90.0
Սոց. ապահովման փոխանցումներ		հազ. դրամ	22.5
Ամորտիզացիա	-	հազ. դրամ	12.0
Ընդամենը		հազ. դրամ	371,1
Անուղղակի ծախսեր	10	հազ. դրամ	37,1
Ընդամենը		հազ. դրամ	408,2
Չնախատեսված ծախսեր	5.3	հազ. դրամ	21,6
Ընդամենը	10	հազ. դրամ	429,82
Շահութահարկ	10	հազ. դրամ	42,98
Ամբողջը		հազ. դրամ	472,8
1մ ² մակերեսի վերականգնման աշխատանքների համարանհրաժեշտ ծախսը	-	դրամ	152,28
Վերականգնման աշխատանքների ծախսերը մարվող պաշարների 1մ ³ -ի վրա	-	դրամ	0,96

Իրականացվելու է նաև վերականգնված տարածքների կենսաբանական ռեկուլտիվացիա: Այս նպատակով արտադրական և աշխատանքային հրապարակների և ճանապարհի հարթեցված, փխրեցված տարածքները պարարտացվելու են, կատարվելու է կաթնբեկի, սիզախոտի, շոյուղախոտի և դաշտավլուկի սերմերի ցանք: Այդ աշխատանքների կատարման նպատակով նախատեսվում է տրամադրել 234.819 հազ. դրամ: Ռեկուլտիվացիոն աշխատանքների ընդհանուր արժեքը կկազմի 707,8 հազ. դրամ: Գումարը հատկացվելու է շրջակա միջավայրի պահպանության դրամագլխին ՀՀ կառավարության 21.10.2021թ.-ի N1733-Ն որոշմամբ սահմանված ընթացակարգով:

Հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ, ՀՀ ընդերքի մասին օրենսգրքի պահանջներին համապատասխան, կկազմվի հանքի փակման վերջնական ծրագիրը, որտեղ կնկարագրվեն բացահանքի, և ճանապարհների լեռնատեխնիկական վերականգնման վերանայված, փաստացի վիճակին համապատասխանող աշխատանքները:

Վերականգնման կենսաբանական փուլի աշխատանքների նախահաշիվը ներկայացվում է ստորև:

Կենսաբանական վերականգնման փուլի աշխատանքների նախահաշիվը

№	Ծախսերի հոդվածները	Չափման միավորը	Անհրաժեշտ քանակը	Գումարը, հազ.դր.
1.	Գրանուլացված կենսապարարտանյութ	տ	1	35.0
2.	Համալիր օրգանահանքային պարարտանյութ	տ	0.2	35.0
3.	Սերմեր	կգ	50	45.0
4.	Գործիքներ (բահ, դուլ, փոցխ)	հատ	4	8,0
6.	Արտահագուստ 2 մասնագետի համար	լրակազմ	2	10.0
7.	Աշխատավարձ	հազ.դրամ		80.0
8.	Տրանսպորտային ծախսեր	հազ.դրամ		10.0
9.	Ընդամենը	հազ.դրամ		223,0
10.	Չնախատեսված ծախսեր	հազ.դրամ	9-րդ տողի 5.3%-ը	11,89
	Ամբողջը	հազ.դրամ		234,819

7.1. Թափոնների կառավարում:

- Աշխատանքների դադարեցում և տեխնիկայի դուրսբերում գարնանային վարարման շրջանում :

- Ըստ կիրառելիության ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշմանդրույթների ապահովում: Պահպանության ենթակա բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում նախատեսվում է.

1) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,

3) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

- Շրջանի կենսաբազմազանության պահպանության նպատակով Գետամեջի հանքավայրի շահագործման աշխատանքներին մասնակցող անձնակազմը անցնելու է հատուկ վերապատրաստում և ծանոթանալու է շրջանում հայտնի՝ ՀՀ կենդանիների և բույսերի կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ:

- Աշխատակիցների հրահանգավորում, ծանոթություն անվտանգությանտեխնիկայի կանոններին:

- Հանքավայրի տարածքի պարագծով տեղադրվելու են նախագուշացնող նշաններ, ինչը թույլ կտա կանխել անվտանգության տեխնիկայի հրահանգավորումչանցած մարդկանց մուտքը հայցվող տարածք:

- ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի N18-Ն որոշման պահանջների կատարում՝ գետի հունի վիճակի ու կայունության մշտադիտարկումների իրականացում, տոպոհանութային աշխատանքների կատարում:

- Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում : Ընթացակարգն ուղղված կլինի հողային աշխատանքների ընթացքում բացահայտվելիք բոլոր գտածոներին՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.

- Համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
- Հուշարձանների գնության իրականացում, նախքան շինարարական աշխատանքների սկիզբը, երբ հողը մաքրված է ,
- Հնագետների տեղաբաշխումը շինարարության վայրերը վերահսկելու համար, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը հողային աշխատանքների իրականացման ընթացքում,
- Արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում և գնահատում հնագիտական մոնիտորինգի միջոցով;
- Անհրաժեշտության դեպքում պետական մարմինների ծանուցում,
- Պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար, միաժամանակ նվազեցնելով շինարարական աշխատանքների ուշացումները,
- Մոնիտորինգային գործունեության և պատահական գտածոների արձագանքման վերստուգիչ գրանցումների վարում:

Բնապահպանական կառավարման պլանը ներկայացվում է նաև աղյուսակի տեսքով :

Ծրագրավորվող գործունեություն	Հնարավոր ազդեցությունները	Ազդեցությունների նվազեցման, չեզոքացման միջոցառումները
1	2	3
Լեռնակապիտալ աշխատանքներ		
<p>Ջրհեռացման առվի կառուցում</p> <p>Մոտեցնող բնահողային ճանապարհի կառուցում և բարեկարգում</p> <p>Արդյունաբերական հրապարակի կառուցում, կարգաբերում</p> <p>Տրանսպորտային սարքավորումների և էքսկավատորի շարժման ուղեծրով ПБЖ-32 մակնիշի փոխադրվող երկաթբետոնե տիպային սալիկների տեղադրում</p>	<p>Տարածքների խախտում Փոշու արտանետումներ</p>	<p>Ռեկուլտիվացիոն աշխատանքներ աշխատանքների ավարտից հետո Տարածքի ջրցանում և կանաչապատում Արտանետումների մոնիթորինգի իրականացում</p>
Արդյունահանման աշխատանքներ		
<p>Բացահանքի կառուցում</p>	<p>Լանդշաֆտի խախտում</p> <p>Փոշեզոլայացում բացահանքերի սահմաններում</p>	<p>Բնական ռեկուլտիվացիա յուրաքանչյուր տարվա վարարումների ժամանակ</p> <p>Փոշենստեցում</p>
<p>Արդյունահանված հումքի արդյունահանման, հանույթաբարձման և տեղափոխման աշխատանքներ</p>	<p>Փոշեզոլայացում ճանապարհներին</p>	<p>Փոշենստեցում</p> <p>Բեռնատարերի թափքի ծածկում</p> <p>Ավազակոպճային կուտակի տեղափոխում խոնավ վիճակում</p> <p>Արտանետումների մոնիթորինգի իրականացում</p>

Հումքի արդյունահանում	Գետի ջրերում պղտորության, կախության մասնիկների ավելացում	Ջրհեռացման առվի հատակի պատում ցեոլիտային շերտով
Հումքի արդյունահանում	Գետի ջրերում պղտորության, կախության մասնիկների ավելացում	ՀՀ կառավարության 10.01.2008թ.-ի N 18-Ն որոշման համաձայն՝ գետի հունի վիճակի ու կայունության մշտադիտարկումների իրականացում
		Գետի ջրերի որակի մոնիթորինգ
		Կեղտաջրերի հավաքում բետոնապատ հորատի պուզարանում, որը պարբերաբար դատարկում է հատուկ ծառայության ուժերով
	Թափոնների գոյացում	Նավթամթերքների, դրանց մնացորդների պահեստավորում և պահումարտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թերություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը
		Արտադրական տարածքի մոնիթորինգ՝ նավթամթերներով աղտոտվածությունը կանխելու նպատակով

		<p>Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողությունների մեջ, տեղափոխվում մոտակա կազմակերպված աղբավայր համապատասխան ծառայություն մատուցող կազմակերպության ուժերով՝ կնքված պայմանագրի հիման վրա</p> <p>Մաշված անվաղողերի տրամադրում ՊՆ-ին սահմանային դիրքերը ամրացնելու համար</p>
Հումքի արդյունահանում	Բուսածածկի խախտում, կենդանիների միգրացիաաղմուկի, թրթռումների հետևանքով	ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի N 781-Ն որոշման դրույթների
		Մեքենաների շարժիչների կարգաբերում
		Չեզոքացուցիչ սարքերի տեղադրում
		Կենսաբազմազանության տարեկան դիտարկում՝ դիտողական զննում, երթուղիներ, ֆոտոթակարդներ, հետքերի, կենսագործունեության մնացորդների զննում
Հանքի փակման փուլ		
Սարքավորումների շինությունների ապամոնտաժում	Խախտված տարածքներ արտադրական հրապարակում	Խախտված տարածքների ռեկուլտիվացիա
Երկաթբետոնյա սալիկների հեռացում տարածքից		
Ջրհեռացման առվի հետլցնում		
Աշխատանքների իրականացման տարածքի լանդշաֆտային ամբողջականություն	Արտածին երկրաբանական պրոցեսներ, տարածքի ջրակալում	ՀՀ կառավարության 10.01.2013թ.-ի N 22-Ն որոշմամբ սահմանված մշտադիտարկումների իրականացում

8. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐ

Արտակարգ իրավիճակների պատրաստ լինելու համար հանքավայրի տարածքում նախատեսվում են շարժական կապի միջոցներ, առաջին բուժօգնության միջոցներ, անվտանգության կանոնների վերաբերյալ անձնակազմի գիտելիքների ստուգում:

Արդյունահանման նպատակով հայցվող տարածքը հարում է Արարատյան դաշտի մասը կազմող հարթավայրին, որի թեքության անկյունը չի գերազանցում 4°: Հանքավայրի տարածքի բարձրությունը տատանվում է 818-820մ-ի սահմաններում:

Քանի որ սաղանքային երևույթները հայցվող տարածքում բացակայում են հետևաբար, սողանքային երևույթներով պայմանավորված արտակարգ իրավիճակ հանքավայրում լինել չի կարող:

Հանքավայրում արտակարգ իրավիճակները կարող են պայմանավորված լինեն հետևյալ գործոններով.

4) Երկրաշարժ՝ հաշվի առնելով, որ Հանրապետության տարածքը գտնվում է սեյսմիկ ակտիվ գոտում : Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2006 թվականի փետրվարի 3-ի «Սեյսմակայուն շինարարություն. նախագծման նորմեր» N 24-Ն հրամանի՝ հանքավայրի տարածքը գտնվում է 1-ին սեյսմիկ գոտում, որին բնորոշ է 300սմ/վրկ² կամ 0.3g գրունտի հորիզոնական արագացման մեծություն:

Նախատեսվում է մշակել ուժեղ երկրաշարժերի դեպքում գործողությունների պլան՝ վտանգավոր տարածքներից աշխատակիցների ապահով տարահանումն իրականացնելու նպատակով : Անվտանգության տեխնիկայի կանոնների վերաբերյալ հրահանգավորում իրականացնելու ժամանակ առանձին ներկայացվելու են նաև երկրաշարժերի ժամանակ աշխատակիցների պահվածքի կանոնները, գործողությունների հաջորդականությունը: Աշխատանքները սպասարկող կենցաղային նշանակության վագոն-տնակում նախատեսվում են առաջին օգնության դեղորայքային փաթեթներ :

5) Հրդեհներ՝ կապված մարդածին գործոնների հետ: Հրդեհային անվտանգությունն ապահովվելու համար աշխատակիցները տեղեկացվելու են

տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ : Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի գործողությունների պլան: Հանքավայրի բլոկներում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, բահ:

6) Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ) : Անբարենսպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- ավելացվում է կատարվելիք ջրցանը,
- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- նվազեցվում է փոշեգոյացման հետ կապված աշխատանքների ծավալները,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով,
- աշխատակիցները պատսպարվում են արտադրական հրապարակում տեղադրված վազոն-տնակում:

7) Արաքս գետի վարարում՝ ապրիլի վերջից-հունիսի վերջ: Այս շրջանում հանքավայրի տարածքում աշխատանքներ չեն իրականացվելու: Դադարեցվելու է տեխնիկայի և մարդկանց մուտքն ու տեղաշարժը հանքավայրի սահմաններում:

Հանքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,

- աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, ժամանակին, ոչ ուշ քան երեք ամիսը մեկ, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

9. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ (ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ) ՊԼԱՆ

Օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ բացահանքի տարածքում և ավտոճանապարհին;
2. լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ ;
3. օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով բացահանքի և արտադրական տարածքի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով մշտադիտարկումներ՝ ամսեկան մեկ անգամ;
4. Արաքս գետի ջրերի նմուշարկում աշխատանքների ընթացքում յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ պղտորության ուսումնասիրության նպատակով;
5. կենսաբազմազանության ուսումնասիրություն, նկարագրում՝ տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն (հստակ դիտարկան կետ նշել հնարավոր չէ, դիտարկումը կատարվելու է հանքավայրում և հարակից տարածքներում:

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը

նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում :

Տարածքի կենսաբազմազանության մշտադիտարկումը կատարվելու է պայմանագրային հիմունքներով՝ կենսաբանի և բուսականի կողմից:

Ստացված տեղեկատվությունը ներկայացվելու է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարություն՝ ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման պահանջներին համաձայն: Մշտադիտարկման նպատակով ընկերությունը տարեկան մասնահանելու է 200.0հազ.դրամ:

Գետի հունի փոփոխությունը բացառելու նպատակով յուրաքանչյուր ամիս կատարվելու է գետի հունի վիճակի ու կայունության մշտադիտարկումներ (տոպոհանութային աշխատանքներ): Մշտադիտարկումների կառուցվածքները ներկայացվում է նաև աղյուսակում:

Մշտադիտարկումների օբյեկտը	Ցուցանիշը	Մշտադիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մթնոլորտային օդ,բացահանքի տարածք, ավտոճանապարհ	Փոշի, ածխածնի օքսիդ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	Աշխատանքների իրականացման վայր,շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ, արտադրական հրապարակ և բացահանք	Հողերում նավթամթերքների պարունակությունը	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Հանքավայրի տարածք, ամսականմեկ անգամ
Արաքս գետի ջրեր	Պղտորություն	Նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն	Շաբաթական մեկ անգամ

Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ. հանքավայրի և հարակից տարածքներ	Տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչներ իքանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	Հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	Հանքավայրի և հարակից տարածքներ, տարեկան մեկ անգամ
---	---	---	---

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մոնիտորինգի կետերի տեղադիրքը ներկայացված է ստորև նկարում:



----- Հոդային ծածկույթ, մթնոլորտային օդի և կենսաբազմազանության մշտադիտարկման կետ

----- Ջրային ռեսուրսի և աղմուկի մշտադիտարկման կետ

10. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎՆԱՄԻ ԿԱՆԽՈՒՄԸ ՕԴԱՅԻՆ ԱՎԱԶԱՆԻ ԱՂՏՈՏՈՒՄԻՑ

Բնապահպանական միջոցառումները միջավայրի պահպանության հիմնական խնդիրներն են - շրջապատող միջավայրի վրա բացասական ազդեցությունների գումարային մինիմալ չափերի պայմաններում, որի ժամանակ անհրաժեշտ է ապահովել արտադրության աշխատանքների իրականացումն ու զարգացումը:

Արտադրության և շրջապատող միջավայրի փոխազդեցության ժամանակ տնտեսական հիմնական ցուցանիշներն է համարվում աղտոտման հետևյալ ծախսերը՝

1. Ծախսեր, որոնք անհրաժեշտ են շրջակա միջավայրի արտանետումների

կրճատումը իրականացնելու համար:

2. Ծախսեր, որոնք անհրաժեշտ են արտանետումների հետևանքով առաջացած բացասական ազդեցությունների նվազեցմանը:

3. Ծախսեր, որոնք անհրաժեշտ են հումքի և արտադրանքի փոխհատուցման համար:

Օդային ավազանի աղտոտումից վնասվում է բերքատվությունը Y_{cy} , վատանում է բուսական և կենդանական աշխարհի վիճակը Y_{pkm} :

$$Y_{\text{ԵՃ}} = Y_{cy} + Y_{pkm}$$

Բացահանքի զբաղեցրած մակերեսն է՝ 1,27հա, մակաբացման ապարների լցակույտեր չկան: Ընդհանուր կկազմի՝ 1,27հա:

Գյուղատնտեսական բերքատվության իջեցումից կախված վնասը կհաշվարկվի՝

$$Y_{cy} = \sum_{H=1}^n (Q_{nj} Z_{nj} - Q_{dj} Z_{dj}) S_1 = (1900 \times 100 - 1700 \times 100) \times 1,27 = 25400 \text{ դրամ}$$

n - գյուղատնտեսական կուլտուրայի քանակն է, որն աճում է տվյալ տարածքի վրա Q_{nj} և Q_{dj} –ն բերքատվությունն է 1հա տարածքից բնապահպանական միջոցառումներից առաջ և հետո, կգ

Z_{nj} Z_{dj} –ն 1 միավորի արժեքն է բնապահպանական միջոցառումներից առաջ և հետո

S_1 – մակերեսն է, որի վրա կատարվում են այդ աշխատանքները:

Հանքավայրի տարածքում ողաբուսական շերտ չկա, չկա նաև անտառային տիպի բուսածածկ (համապատասխան կենդանական աշխարհով) :


Տնտեսական վնասը օդային ավազանի աղտոտումից կկազմի՝

$$Y = 25400 \text{ դրամ}$$

Գրականություն

1. «ՀՀ ՇՄՆ «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի սվյալներ
2. Почвы Армянской ССР. Ред./ Р.А. Эдилян, Г.П. Петросян, Н.Н. Розов. Ереван: “Айастан”, 1976 г.
3. Հայաստանի բույսերի Կարմիր Գիրք.– 2010թ.
4. Հայաստանի կենդանիների Կարմիր Գիրք.– 2010թ.
5. Флора Армении / под ред. А.Л.Тахтаджяна. – Ереван: изд-во АН Арм ССР
6. “Растительность Армянской ССР”. Магакьян А.К.
7. “Флора, растительность и растительные ресурсы Армении”, Институт ботаники НАН РА Армянское ботаническое общество. Ереван
8. “Дикорастущие съедобные растения Армении”. А.П. Тер-Восканян, Ученые записки Ереванского государственного института.
9. “Цветущие уголки биоразнообразия”, FAO, <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>
10. «Животный мир Армянской ССР». Даль С.К ,1954
11. ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայք
12. «Заповедники СССР. Заповедники на Кавказе». Издательство "Мысль" 1990
13. Թամանյան Չ., Գաբրիելյան Է., Ֆայվուշ Գ., Հովհաննիսյան Ս., Ներսեսյան Ա., Արևշատյան Ա., Խանջյան “Հայաստանի էնդեմիկ բույսերի կարմիր ցուցակ”



Հաստատված է
 ՀՀ ՆԳ Նախարարության
 «Տեխնիկական անվտանգության
 ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի
 տնօրենի  Գևորգյան
 ստորագրությամբ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ՕՐՅԵԿՑԻ ՆԱԽԱԳԵԱՅԻՆ ՓԱՏՏԱԹՂԹԵՐԻ
 ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ
 ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N^o1987

«31». 07. 2024 թ.

Համաձայն «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի և «Ավետիս-Տիգրան» ՍՊԸ-ի տնօրենի և ՀՀ ՆԳ Նախարարության «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի միջև 30.07.2024թ -ին կնքված N^o1987 պայմանագրի՝ 30.07.2024թ-ից մինչև 31.07.2024 թ.-ը «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի տեխնիկական անվտանգության վառելիքի, լեռնահանքային, քիմիական օբյեկտների և սարքավորումների տեխնիկական անվտանգության փորձաքննության բաժնի փորձագետ Հ. Դարբինյանի կողմից տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկվեց «Ավետիս-Տիգրան» ՍՊԸ-ի կողմից շահագործման նախապատրաստվող ՀՀ Արարատի մարզ, Բուրաստան համայնքի Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայր, բացահանք արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերը:

Համաձայն նախագծային փաստաթղթերի, նախատեսվում է շահագործել Գետամեջի ավազակոպճային խառնուրդի հանքավայրը, բացահանք արտադրական վտանգավոր օբյեկտը, որը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Բուրաստան համայնք, գյուղից 2.7 կմ դեպի Հարավ-արևմուտք, Արաքս գետի ձախ ափին, ՀՀ Պետական սահմանի եզրին և զբաղեցնում է 1.27 հա տարածք, որի սահմաններում ներառված է 584200 մ³ օգտակար հանածո: Պաշարները հաստատվել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի օգտակար հանածոների պաշարների գործակալության Պետական ընդերքաբանական փորձաքննության հանձնաժողովի 2007 թվականի մայիսի 29-ի թիվ 139 որոշմամբ, C₁ կարգով 584200 մ³ քանակով: Բացահանքի տարեկան արտադրողականությունը համաձայն տեխնիկական առաջադրանքի նախատեսվում է 29210մ³/տարի կորզվող պաշար:

Բացահանքի ծառայման ժամկետը ընդունվում է 20.0 տարի:

Հանքավայրի շահագործումը նախատեսվում է կատարել բաց եղանակով՝ ընդլայնական ընթացքաշերտերով միակողմանի, մշակման համակարգով:

Նախագծվող բացահանքում մակաբացման ապարները բացակայում են:

Ընտրված մշակման համակարգի պարամետրերն են.


-հանքաստիճանի բարձրությունը միջինը՝	4.0մ	
-ընթացքային շերտի լայնությունը՝	8.5մ	
-աստիճանի թեքության անկյունը	-70 ^o	
-աշխատանքային հրապարակի լայնությունը		- 20.0մ

Ավազակույճային խառնուրդի արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել դեպի ներքև շերտիման եղանակով, 1.2 մ³ շերտի տարողությամբ դրազլայնով սարքավորված ՅՕ-5111EXL մակնիշի էքսկավատորով: Նախ կատարվում է օգտակար հանածոյի արդյունահանում և կոտակում օգտակար հաստաշերտի մակերևույթին (առաստաղային)՝ օգտակար հանածոյի ջրազրկման նպատակով, որից հետո իրականացվում է ջրազրկված օգտակար հանածոյի կոյտի բարձունը ավտոինքնաթափի մեջ:

Նախագծում առանձին բաժնով նախատեսված են նաև աշխատանքի պաշտպանության և տեխնիկական անվտանգության միջոցառումներ:

Տեխնիկական անվտանգության փորձաքննության ենթարկված «Ավետիս-Տիգրան» ՍՊԸ-ի կողմից շահագործման նախապատրաստվող ՀՀ Արարատի մարզ, Բուրաստան համայնքի Գետամեջի Ավազակույճային խառնուրդի Հանքավայր, բացահանք արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերը **համապատասխանում են** «Բաց եղանակով մշակվող օգտակար հանածոների հանքավայրերի անվտանգ շահագործման տեխնիկական անվտանգության կանոնները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 07.07.2022թ N-1050-Ն որոշման պահանջներին, և նախագծային փաստաթղթերին տրվում է տեխնիկական անվտանգության փորձաքննության **դրական** եզրակացություն:

- Փորձագիտական եզրակացությանը կցվող նյութերը՝
1. Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագիծը-33էջ,
 2. Աշխատանքային գծագրեր – 8 թերթ

Փորձագետ  Հ. Դարբինյան N°013
(պաշտոնը ստորագրությունը, ազգանունը, վկայականի համարը)


Колмак Рагнар Якумович Назарован Д.Т.



"Rīgas - Dienvid" nr 192
 "Rīgas - Dienvid" nr 192
 "Rīgas - Dienvid" nr 192
 "Rīgas - Dienvid" nr 192
 "Rīgas - Dienvid" nr 192

44 00 kls - vidējā grupā, gājot uz lauku ceļiem
 44 00 kls - vidējā grupā, gājot uz lauku ceļiem
 44 00 kls - vidējā grupā, gājot uz lauku ceļiem

Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests



1-2	267.6	11	11
2-3	179.2	-	-
3-4	81.7	7	7
4-5	188	-	-
5-6	179.2	-	-
6-7	226.6	-	-
7-8	179.2	-	-

Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests
 Valsts robežsarga dienests



Կադաստրի
կոմիտե

Փաստաթղթի ծածկագիր՝ 01092023-0051
Փաստաթղթի գաղտնաբառ՝ 7DLXASYA



Տեղեկանք

Անշարժ գույքի միավորի նկատմամբ գրանցված իրավունքների (բոլոր տեսակի) վերաբերյալ

Անշարժ գույքի հասցե՝ Մնրզ Արարատ, համայնք Արտաշատ գյուղ Քուրաստան

Գրանցված իրավունքներ (1)

Իրավունք - 1		
Գրանցման ամսաթիվ		2004-04-22
Վկայականի համար		0078261
Լրացուցիչ տեղեկություն		-
Տեսակ		ՎԱՐՁԱՎԱԼՈՒԹՅՈՒՆ
Գրանցված իրավունքի օբյեկտ		
Հողամասեր		-
Կառուցվածքներ		-
Շենքեր		-
Սուբյեկտներ		Ֆիրմա-Մարտին ՍՊԸ

Արարատի մարզ
 Բուրաստան համայնք
 Հատված կադաստրային քարտեզից
 Կադաստրային ծածկագիր՝ 03-027-0572-0002
 Մասշտաբ 1: 5000



Կադաստրի կոմիտե



Կոորդինատներ		
	X	Y
1	8455939.7872	4425879.7107
2	8455854.8201	4425843.3795
3	8455868.5380	4425810.5830
4	8455956.7330	4425677.9980
5	8456128.5320	4425512.3634
6	8456136.9685	4425541.1356
7	8456166.2358	4425640.9496

սպասարկման գրասենյակ



Դիմող՝ Դավիթ Գուսեպյան

Տրամադրված տեղեկատվությունը՝

04.09.2023թ.

(տրման ամսաթիվը)

Գ/Գ	Մարզ	Գամայնք, քաղաք, գյուղ, վարչական շրջան	Ծածկագիր	Կադաստրային քարտեզ		Շրջադարձային կետերի կոորդինատներ		Տպագրված քերթեր	
				Միավորի քանակը	Արժեքը (դրամ)	քանակը	Արժեքը (դրամ)	քանակը	Արժեքը (դրամ)
1	Արարատ	Բուրաստան	0572 - 0002	1	100	7	700	1	300

Կճարման ենթակա գումարի չափը կրկնավճարով՝ 2200 դրամ

Տեղեկատվությունը տրամադրվում է Կադաստրի Կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն ստորաբաժանման կողմից:

Սպասարկման գրասենյակ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՔԱՐՏԵԶԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

04/09/2023թ.

N US-04092023-99-0023

զաղտնարան՝ L194U1C2X5WG

Դիմող՝

ԴԱՎԻԹ ՀՈՎՍԵՓՅԱՆ ԳԱԳԻԿԻ

Ի պատասխան Ձեր 01/09/2023-3-1087 դիմումի տրամադրում ենք պահանջվող տեղեկատվությունը գործող կադաստրային քարտեզից:

Առդիր՝ 1 էլեկտրոնային ֆայլ, 1 տպագրված թերթ:

Տեղեկանքը կազմվել է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնի մասնագետ ԲՈՒՋԱՆՆԱ ՄԱՐԿՈՍՅԱՆԻ կողմից:

**Սույն տեղեկանքը հաստատված է էլեկտրոնային նշանակով տեղեկանքը կազմող պաշտոնատար անձի կողմից:*